Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

608
Մ-33

# ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԳՅՈՒՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

(ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՅԵՎ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐ)

ՀԱՄԽ

ՊԵՏՀՐԱՏ 1931 ՅԵՐԵՎԱՆ

20 JUL 2010
608
Մ—33

ՀԱՄԽ

# ԱՍՍԱՅԱԿԱՆ
# ՅՈՒՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

(ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՅԵՎ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐ)

ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
ՀՍԽՀ — ССРА
им. А. Мясникяна

ԵՏՀՐԱՏ 1931 ՅԵՐԵՎԱՆ

12285

322

ՊԵՏՀՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ
ՀՐԱՏԱՐԱԿ. № 1746
ԳԼԱՎԼԻՏ 6589(Բ)
ՊԱՏՎԵՐ 3869
ՏԻՐԱԺ 5000

# ԽՍՀՄ ԿԵՆՏԳՈՐԾԿՈՄԻ ՅԵՎ ԺՈՂԿՈՄԽՈՐՀԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ ԳՅՈՒՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՏԵԽՆԻՔԱԿԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Տեխնիկայի տիրապետումը և նրա հետագա զարգացումը վերակառուցման շրջանում վճռական նշանակություն ունեն սոցիալիստական շինարարության հաջող ծավալման համար: Սոցիալիստական ինդուստրացումը բանվորական մասսաների տեխնիքական ստեղծագործության առաջ բաց է անում զարգացման այնպիսի լայն մի ասպարեզ, վորը կապիտալիստական հասարակարգում միանգամայն անհնարին է: Մասսայական գյուտարարությունը բանվորներին արտադրության սոցիալիստական ռացիոնալացման անմիջապես մասնակից դարձնելու և նոր տեխնիկան ԽՍՀՄ-ի ժողտնտեսության մեջ արմատացնելու կարեվորագույն ձեվերից մեկն է հանդիսանում:*

*Սակայն, բյուրոկրատական խեղաթյուրումների, քարացածության, քաշքշուկների և յերբեմն նույնիսկ վնասարարության հետեվանքով գյուտարարական գործին և հատկապես բանվորական գյուտարարությանը մինչև այժմ միանգամայն անբավարար ուշադրություն է դարձվում:*

*Չնայած այն վիթխարի նշանակությանը, վորպիսին ունի մասսայական գյուտարարությունը ինդուս-*

տրացման և տեմպերի համար մղվող պայքարում, գյուտարարների օգտագործումը և տեխնիկական փորձի փոխանակությունը միանգամայն անմխիթարական դրության մեջ են գտնվում: Թույլ է գյուտարարության օժանդակող մարմինների աշխատանքը: Բանվոր գյուտարարների ստեղծագործական նախաձեռնությունը բավականաչափ խրախուսանքի չի արժանանում:

Անհրաժեշտ է այս ուղղությամբ ամենակարճ ժամանակում վճռական բեկում առաջացնել: Մասսայական գյուտարարության կազմակերպումն ու օգտագործումը, տնտեսական մարմինների, պրոֆմիութենական և այլ հասարակական կազմակերպությունների կարևորագույն գործը պետք է դարձնել:

Մինչև այժմ գործող պատենտային օրենսդրությունը, վորը գյուտարարին նրա գյուտի համար բացառիկ իրավունք վերապահելու միջոցով պաշտպանում եր գյուտարարների շահերը, այլևս չի համապատասխանում սոցիալիստական հասարակարգի գիտակից կառուցողների՝ առաջավոր գյուտարարների ձգտումներին:

Անհրաժեշտ է աշխատավոր գյուտարարների և սոցիալիստական պետության փոխ-հարաբերությունների այնպիսի ձևեր ստեղծել, վորոնք համապատասխանեն այն դերին, վորպիսին խաղում են բանվոր գյուտարարները, վորպես սոցիալիստական շինարարության անմիջական մասնակիցներ: Գյուտերը ժամանակին ու լրիվ օգտագործելու յերաշխիքների ապահովման հետ միասին, անհրաժեշտ է մասսայական գյուտարարության համար խրախուսիչ պայմաններ ստեղծել, ապահովելով աշխատավոր գյուտարարի պատշաճ (նորմավորված) վարձատրությունը, նրան տալով մի շարք արտոնություններ և առավելություններ (բնակարանային արտոնություն. ուսումնական հիմնարկներն առաջին հերթին ընդունվելու, գիտա-հետազոտական և փորձնական ձեռնարկություններում ու հիմնարկություններում առաջին հերթին գիտական աշխատողի պաշտոն ստանալու, լավագույն գյուտերը բացառապես գյուտարարական աշխատանքի համար օգտագործելու, լրացուցիչ արձակուրդ ստանալու, անհատական կենսաթոշակի կապվելու և այլ իրավունքներ):



Յելնելով սրանից, ԽՍՀՄ Կենտգործկոմն ու Ժողկոմխորհը վորոշում են.

1. Հաստատել գյուտերի ու տեխնիկական կատարելագործումների կանոնադրությունը և այն կիրարկության դնել հրատարակությունից մի ամիս հետո:

2. Առաջարկել Աշխատանքի և Պաշտպանության Խորհրդին մի ամսվա ընթացքում՝

ա) իրեն կից կազմակերպել գյուտարարական կոմիտե և հաստատել նրա կանոնադրությունը.

բ) վորոշում հրատարակել պատենտների տուրքերի չափի ու վճարման կարգի մասին (կանոնադրության 67-րդ հոդվածը):

3. Այն գյուտարարները, վորոնք համաձայն նախկին օրենքի՝ իրենց գյուտերի համար պատենտ են ստացել, վայելում են ներկա կանոնադրությամբ նախատեսված բոլոր արտոնությունները, կամ նրանցից մի քանիսը, յեթե միայն նրանց գյուտերը արդեն կիրառվում են պետական մարմինների կամ հանրայնացված սեկտորի վորևէ կազմակերպության կողմից, ըստ վորում յուրաքանչյուր դեպքում այդ մասին պետք է վորոշում

ընդունի ԱԳԽ-ին կից գյուտարարական կոմիտեն կամ դաշնակից հանրապետությունների կառավարություններին կից կոմիտեները։

4. Այն հայտարարությունների նկատմամբ, վորոնք ներկայացվել են մինչև ներկա կանոնադրության գործադրությունը և վորոնց համար դեռևս պատենտներ չեն տրվել, կիրառվում է հետևյալ կարգը.

ա) տուրքից ազատված հայտարարությունները համարվում են հեղինակի վկայական ստանալու հայտարարություններ, յեթե միայն այն ներկայացնողները սույն կանոնադրության հրատարակությունից հետո, մեկ և կես ամսվա ընթացքում ցանկություն չեն հայտնի պատենտ ստանալու մասին և չեն մուծի հայտարարության համար սահմանված տուրքը.

բ) այն հայտարարությունները, վորոնց համար տուրք է վճարված, համարվում են պատենտ ստանալու հայտարարություններ, յեթե միայն այն ներկայացնողները սույն կանոնադրության հրատարակությունից հետո, մեկ և կես ամսվա ընթացքում, ցանկություն չեն հայտնի հեղինակի վկայական ստանալու մասին։ Այդպիսի դիմում ներկայացնելու դեպքում, վճարած տուրքը վերադարձվում է։

Այն հայտարարություններում, վորոնք տրվում են սույն կանոնադրության հրատարակությունից հետո, բայց մինչև նրա գործադրությունը, հայտարարությունը ներկայացնողին իրավունք է տրվում նշելու՝ հեղինակի վկայակա՞ն է նա ուզում ստանալ արդյոք, թե՞ պատենտ։

5. ԱԳԽ-ին կից գյուտարարական կոմիտեն վորոշում է, թե սույն կանոնադրության գործադրությունից



հետո, պատենտ ստացած գյուտարարները ի՞նչ դեպքերում և ի՞նչպիսի կարգով կարող են այն փոխարինել հեղինակի վկայականով։

Կոմիտեն լուծում է նաև կանոնադրության գործադրման հետ կապված այլ կարգի հարցերը։

6. Առաջարկել դաշնակից հանրապետությունների կենտգործկոմներին մեկ ամսվա ընթացքում քրեական օրենսգրքերում սոցիալական պաշտպանության համապատասխան միջոցառումներ նախատեսել գյուտերի ու տեխնիքական կատարելագործումների կանոնադրության խախտումների դեմ։ Ըստ վորում, հիմնվելով ԽՍՀՄ-ի և դաշնակից հանրապետությունների քրեական օրենսդրության հիմնական սկզբունքների 3-րդ հոդվածի յերկրորդ մասի վրա (ԽՍՀՄ Օրենքների Ժողովածու, 1927 թ., № 12, հոդ. 122), դաշնակից հանրապետությունների կենտգործկոմներին առաջարկվում է նախատեսել հետևյալը.

ա) ԽՍՀՄ-ի սահմաններում արված գյուտերի, ինչպես նաև պետության կողմից գործուղված խորհրդային քաղաքացիների միջոցով արտասահմանում արվող գյուտերի մասին առանց պատշաճ թույլատվության արտասահմանում հայտարարություն ներկայացնելու համար—հարկադիր աշխատանք մինչև մեկ տարի, կամ տուգանք մինչև 1000 ռ. սահմաններում.

բ) «ա» կետում մատնանշված գյուտերն առանց պատշաճ թույլտվության արտասահման ուղարկելու կամ հանձնելու համար— ազատազրկում մինչև տասը տարի ժամանակով՝ ամբողջ գույքի կամ նրա մեկ մասի բռնագրավումով։

Պետական պաշտպանության վերաբերող, ինչպես նաև գաղտնի համարված այլ կարգի գյուտերի ու կատարելագործումների մասին արտասահմանում հայտարարություն տալը կամ այն հանձնելը դատական հետապնդման է յենթարկվում համաձայն պետական հանցագործությունների օրենսդրության 6-րդ հոդվածի (ԽՍՀՄ Օրենքների ժողովածու, 1927 թ., № 12, հոդ. 123)։

7. Հանձնարարել ԽՍՀՄ Ժողկոմխորհին և դաշնակից հանրապետությունների ժողկոմխորհներին յերկու ամսվա ընթացքում ԽՍՀՄ-ի և դաշնակից հանրապետությունների օրենսդրության մեջ հաստատել գյուտերի ու կատարելագործումների կանոնադրությունից բխող փոփոխությունները։

8. Հանձնարարել ԽՍՀՄ Բանվորագյուղացիական տեսչությանը յերկու ամսվա ընթացքում կանոնադրությունը հրատարակել ժողովրդական տնտեսության, սոցիալ-կուլտուրական շինարարության ու յերկրի պաշտպանության բոլոր բնագավառներին վերաբերող, բայց գյուտերի և կատարելագործումների կանոնադրությամբ չնախատեսված ոգտակար առաջարկությունները հաշվառման յենթարկելու, ընտրելու և խրախուսելու կարգի մասին։

ԽՍՀՄ ԿԳԿ-ի նախագահ՝ Մ. ԿԱԼԻՆԻՆ

ԽՍՀՄ ԺԿԽ-ի նախագահ՝

Վ. ՄՈԼՈՏՈՎ (ՍԿՐՅԱԲԻՆ)

ԽՍՀՄ ԿԳԿ-ի քարտուղար՝ Ա. ՑԵՆՈՒԿԻՁԵ

9 ապրիլի 1931 թ.



# ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

## ԳՅՈՒՏԵՐԻ ՅԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

### I ԲԱԺԻՆ

### ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ներկա կանոնադրությունը տարածվում է՝

ա) նոր գյուտերի և

բ) այլ տեխնիկական կատարելագործությունների վրա։

2. Նոր գյուտի հեղինակը կարող է պահանջել, վորպեսզի՝

ա) ճանաչեն իր հեղինակի լինելու հանգամանքը միայն,

բ) տան նաև գյուտի բացառիկ իրավունքը։

Առաջին դեպքում գյուտի համար տրվում է հեղինակի վկայական, իսկ յերկրորդ դեպքում՝ պատենտ։

Հայտարարության մեջ պետք է մատնանշել՝ գյուտարարը հեղինակի վկայական է ուզում ստանալ, թե՞ պատենտ։

3. Հեղինակի վկայականներ և պատենտներ տրվում են միայն այն նոր գյուտերի համար, վորոնք կարող են կատարվել արդյունաբերական գծով։

Հեղինակի վկայականներ և պատենտներ տրվում են բուժական, անդաստագործական և քիմիական ճանա-

պարհով ստացվող այլ նյութերի պատրաստման նոր յեղանակներ հայտարերելու համար, և ոչ թե տվյալ նյութերի համար։

4. Գյուտերի համար հեղինակի վկայականներ տալու ժամանակ կիրառվում են հետևյալ դրույթները.

ա) գյուտը ԽՍՀՄ-ի սահմաններում գործադրելու իրավունքը պետությանն է վերապահվում.

բ) կոոպերացիան և հանրայնացված սեկտորի մյուս կազմակերպությունները պետական մարմինների հետ համահավասար հիմունքներով կարող են օգտագործել այն գյուտերը, վորոնք իրենց գործունեյության շրջանակին են վերաբերում.

գ) ինքը գյուտարարը (կամ նրա ժառանգը), յեթե նա տնայնագործ կամ մասնավոր ձեռնարկատեր է, կարող է գյուտն օգտագործել իր ձեռնարկության մեջ.

դ) այլ մասնավոր անձինք, ինչպես նաև կոոպերատիվ սիստեմի մեջ չմտնող կոոպերատիվները, գյուտը կարող են օգտագործել այն պետական մարմնի թույլտվությամբ, վորի տնօրինության է վերաբերում տվյալ գյուտը, և այն պայմաններով, վորպիսին սահմանում է այդ մարմինը.

յե) յեթե գյուտը օգտակար է ճանաչված ԽՍՀՄ ժողովրդական տնտեսության համար, գյուտարարն իրավունք ունի վարձատրություն ստանալ պետությունից կամ համապատասխան կազմակերպությունից.

զ) յեթե ժողովրդական տնտեսության համար օգտակար չճանաչված գյուտը կիրառվում է վորևէ ձեռնարկությունում, գյուտարարը կամ նրա ժառանգը իրավունք ունեն վարձատրություն ստանալ այդ ձեռնարկությունից։ Այս դեպքում վարձատրության չափը



սահմանվում է փոխադարձ համաձայնությամբ; իսկ այդպիսին չկայանալու դեպքում՝ դատարանի միջոցով.

է) աշխատավոր գյուտարարն իրավունք ունի օգտըվել այն բոլոր արտոնություններից, վորոնք մատնանշված են սույն կանոնադրության մեջ։

5. Այն դեպքերում, յերբ գյուտարարը գյուտի համար բացառիկ իրավունք (պատենտ) է ուզում, կիրառվում են հետևյալ դրույթները.

ա) առանց պատենտատիրոջ համաձայնության վոչ վոք գյուտն օգտագործելու իրավունք չունի։ Ինքը պատենտատերը կարող է իր գյուտն իրագործել՝ պահպանելով մասնավոր ձեռնարկատիրոջ գործունեյության վերաբերյալ օրենքները. իսկ օտարերկրացիները և օտարերկրյա իրավաբանական անձինք կարող են իրենց գյուտերն իրագործել՝ պահպանելով այն օրենքները, վորոնք վերաբերում են օտարերկրյա կապիտալի տընտեսական գործունեյությունը ԽՍՀՄ-ի սահմաններում թույլատրելու կարգին.

բ) պատենտը տրվում է 15 տարով։ Ժամկետը հաշվվում է այն օրից, յերբ պատենտ տալու մասին վերջնական վորոշում է ընդունված, բայց պատենտատիրոջ իրավունքները պահպանվում են այն օրից, վորից հաշվվում է հայտարարության առաջնությունը (տես հոդ. 43).

գ) պատենտատերը կարող է մի ուրիշի (վորն այս դեպքում կոչվում է լիցենզատեր) թույլատրել (լիցենզիա տալ) գյուտի լրիվ կամ մասնակի օգտագործման համար.

դ) այն հիմնարկությունները և այն անձինք, վորոնք գյուտարարից անկախ և մինչև նրա կողմից հայ-

տարրություն ներկայացնելը տվյալ գյուտը գործադրել են ԽՍՀՄ-ի սահմաններում կամ այդ առթիվ տեսել են անհրաժեշտ պատրաստությունները, պահպանում են գյուտի հետագա ոգտագործման իրավունքը (նախաոգտագործման իրավունքը).

յե) պատենտատերը պատենտն ստանալու օրից հաշված՝ յերեք տարվա ընթացքում պարտավոր է անձամբ կամ լիցենզատիրոջ միջոցով արդյունաբերական մասշտաբով իրագործել իր գյուտը ԽՍՀՄ-ի սահմաններում: Յեթե գյուտն իրագործելու անհրաժեշտ նյութերը արտասահմանից են բերվում կամ պատրաստի վիճակում, կամ մաս-մաս՝ Խ. Միության սահմաններում հավաքելու համար, ապա այդպիսին գյուտի իրագործում չի համարվում: Յեթե գյուտը սահմանված ժամկետում չի իրագործվում, ապա ԱԳԽ-ին կից գյուտարարական կոմիտեն շահագրգռված մարմնի, կազմակերպության կամ անձի դիմումի համաձայն գյուտի իրագործման հարկադիր լիցենզիա է տալիս և վորոշում է պատենտատիրոջ տրվելիք վարձատրության չափը:

զ) յեթե գյուտը պետության համար էական նշանակություն ունի, բայց պատենտատիրոջ հետ համաձայնություն չի կայանում, ապա ԱԳԽ-ին կից գյուտարարական կոմիտեն իրավունք ունի շահագրգռված պետական մարմնի ոգտին պարտադիր կարգով պատենտն օտարացնելու կամ լիցենզիա տալու (գյուտի ոգտագործումն թույլատրելու) վորոշում ընդունել: Նման դեպքերում պատենտատիրոջ տրվելիք վարձատրության չափը վորոշում է գյուտարարական կոմիտեն:

է) գյուտերի պատենտների համար տուրք է գանձվում սույն կանոնադրության 67-րդ հոդվածում նախատեսված չափով:



ը) պատենտ ստացած գյուտարարը չի վայելում այն արտոնությունները, վորոնք ներկա կանոնադրությամբ վերապահված են հեղինակի վկայական ստացող գյուտարարներին:

թ) պատենտ ունեցող գյուտարարը կարող է, մինչև պատենտի ժամկետի լրանալը, այն փոխարինել հեղինակի վկայականով: Այդպիսի փոխարինման պայմաններն ու կարգը սահմանում է ԱԳԽ-ին կից գյուտարարական կոմիտեն:

ժ) թե հեղինակի վկայական և թե պատենտ ունեցող գյուտարարը կարող է ոգտվել այն արտոնություններից, վորոնք տրվում են հեղինակի վկայականով, յեթե միայն նա պետության ոգտին կհրաժարվի պատենտներից կամ այն կփոխարինի հեղինակի վկայականներով:

6. Պատենտ չի տրվում, այլ տրվում է հեղինակի վկայական՝

ա) յեթե գյուտն արված է շնորհիվ այն աշխատանքի, վոր կատարել է գյուտարարը գիտական-հետազոտական ինստիտուտներում, կոնստրուկտորական բյուրոներում, փորձնական ցեխերում, լաբորատորիաներում և հանրայնացված սեկտորի այդպիսի այլ մարմիններում, վորոնք հետապնդում, մշակում և փորձարկում են գյուտերը:

բ) յեթե գյուտն արված է վորևէ պետական մարմնի կամ հանրայնացված սեկտորի վորևէ կազմակերպության հատուկ պատվերով.

գ) յեթե գյուտարարն իր գյուտը մշակելու համար նյութական աջակցություն է ստացել պետությունից

կամ հանրայնացված սեկտորի վորևէ կազմակերպությունից։

7. Թե՛ հեղինակի վկայական ու պատենտ ստանալու իրավունքը և թե արդեն ստացված վկայականներն ու պատենտները փոխանցվում են ժառանգաբար։

Թե պատենտ ստանալու իրավունքը և թե արդեն ստացված պատենտը գյուտարարը կամ նրա ժառանգը կարող են փոխանցել ում վոր կամենան։ Հետագայում դրանք կարող են մեկից մյուսին անցնել ինչպես պայմանագրով, այնպես էլ ժառանգաբար։

Հեղինակի վկայականում կամ պատենտում անպայման պետք է նշել գյուտարարի անունը, թեկուզ և այդպիսիք ուղղակի գյուտարարին տրվելիս չլինեն։

> Ծանոթություն.— Պատենտը փոխանցելու կամ լիցենզիա տալու (հոդ. 5, կետ «գ») պայմանագրերը պետք է տոմարագրել ԱՊԽ-ին կից գյուտարարական կոմիտեյի նորությունների բյուրոյում, այլապես նրանք որինական չեն համարվի։

8. Եթե գյուտարարը մասնավոր անձի հետ ապագա գյուտը նրան տալու մասին պայմանագիր կնքի, ապա այդ պայմանագիրը որինական չի համարվի։

9. Եթե մեկը հայտարարության մեջ դիտավորյալ կերպով սխալ կմատնանշի գյուտարարի անունը, ապա նա քրեական պատասխանատվության կյենթարկվի։

Եթե մեկը անիրավացի կերպով կոգտագործի այն գյուտը, վորի իրագործման իրավունքը պետությանն է պատկանում, ապա նա նույնպես քրեական պատասխանատվության կյենթարկվի։

Եթե մեկը կխախտի պատենտատիրոջ բացառիկ



իրավունքը, ապա պարտավոր է հատուցել նրան պատճառած վնասները։

10. Այն անձինք, վորոնք պետական մարմնի կամ հանրայնացված սեկտորի կազմակերպությանը կառաջարկեն այնպիսի տեխնիկական կատարելագործումներ, վորոնք նոր գյուտեր չեն, ապա այդ առաջարկների ընդունման դեպքում կպարգևատրվեն ըստ դրույքների հատուկ աղյուսակի (տե՛ս հոդ. 90)։ Նրանք վայելում են նույնպես 105-րդ հոդվածում նշված արտոնությունները։

Առաջարկված և ընդունված տեխնիկական կատարելագործումների համար առաջարկողները կարող են համապատասխան վկայականներ ստանալ։ Այս վկայականները տրվում են այն մարմինների ու կազմակերպությունների կողմից, վորոնք ոգտագործում են տվյալ առաջարկները։

11. Ոտարերկրացիները Խ. Միության քաղաքացիների հետ համահավասար հիմունքներով վայելում են բոլոր այն իրավունքները, վորոնք բխում են ներկա կանոնադրությունից։

ԱՊԽ-ին կից գյուտարարական կոմիտեն իրավունք ունի Արտգործժողկոմատի հետ համաձայնության գալուց հետո հատուկ սահմանափակումներ նշել այն պետությունների քաղաքացիների և իրավաբանական անձանց նկատմամբ, վորոնք փոխադարձման իրավունք չեն վերապահում Խ. Միության քաղաքացիներին և իրավաբանական անձանց։

12. Սույն կանոնադրության կիրառման վերաբերյալ հրահանգները հրատարակում է ԱՊԽ-ին կից գյուտարարական կոմիտեն։

## II ԲԱԺԻՆ

## ԳՅՈՒՏԱՐԱՐԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

13․ Գյուտարարությանն օժանդակելու, գյուտարարական մարմիններին ընդհանուր ղեկավարություն ցույց տալու և նրանց գործունեության վրա հսկողություն սահմանելու համար ԱԳԽ-ին կից կազմակերպվում է գյուտարարական կոմիտե։

Նրան կից կազմվում են — ա) նորությունների բյուրո, որը որոշում է գյուտերի նորությունը և տալիս է հեղինակի վկայականներ ու պատենտներ, բ) բողոքների քննության խորհուրդ, որը քննում է նորությունների բյուրոյի որոշումների բողոքարկումները։

Գյուտարարական կոմիտեյի կանոնադրությունը հաստատում է ԱԳԽ-ն։

Գյուտարարական կոմիտեներ կարող են կազմվել նաև դաշնակից հանրապետությունների ժողկոմխորհներին կամ տնտեսական խորհուրդներին (խորհրդակցություններին) առընթեր՝ այդ հանրապետությունների օրենսդրության կարգով և ԱԳԽ-ին կից գյուտարարական կոմիտեյի կանոնադրության հիման վրա։

14․ Գյուտարարությանն օժանդակելու և գյուտերի ու տեխնիկական կատարելագործումների ըստ ամենայնի արագ ու ճիշտ օգտագործումն կազմակերպելու համար ԽՍՀՄ-ի և դաշնակից հանրապետությունների ժողկոմատներին, ճյուղային միավորություններին ու վարչություններին, կոոպերատիվ կենտրոններին, 500 հոգուց ավելի աշխատող ունեցող արտադրական և հաղորդակցական առանձին ձեռնարկություններին (այդ թվում նաև խորհտնտեսություններին և մեքենատրակ-



տորային կայաններին), խոշոր շինարարություններին և անհրաժեշտության դեպքում նաև այլ ձեռնարկություններին ու կազմակերպություններին կից կազմվում են գյուտարարական մարմիններ։

Այս մարմինների տիպական կանոնադրությունները մշակվում են, ՀԱՄԿԽ-ի հետ համաձայնեցնելուց հետո, համապատասխան ժողկոմատների և կոոպերատիվ կենտրոնների կողմից և հաստատվում են ԱԳԽ-ին կից գյուտարարական կոմիտեյի միջոցով, իսկ դաշնակից հանրապետությունների ոչ-միացյալ ժողկոմատների գծով՝ հանրապետությունների օրենսդրությամբ սահմանված կարգով։

15․ Ճյուղային միավորություններին ու վարչություններին, ինչպես նաև կոոպերատիվ կենտրոններին կից գյուտարարական մարմինները (ճյուղային գյուտարարական մարմիններ) կատարում են հետևյալ աշխատանքը․

ա) ընտրում են Խ․ Միության ժողտնտեսության համար օգտակար գյուտերը․

բ) մշակում և փորձարկում են օգտակար գյուտերը և օժանդակում են նրանց կենսագործմանը․

գ) տվյալ ճյուղի ձեռնարկությունների միջև գյուտերի և տեխնիկական կատարելագործումների փոխանակություն են կազմակերպում․

դ) կազմակերպում են նոր գյուտերի ու տեխնիկական կատարելագործումների հետազոտման աշխատանքը, այն շաղկապելով տվյալ ճյուղի ռացիոնալացման և վերակառուցման ընդհանուր պլաններին․

յե) առաջավոր[illegible] տեխնիկայի նվաճումները ժողովրդական տնտեսության տվյալ ճյուղում օգտագործե-

ՀՍՍՀ — ССРА им. А. Мясникяна Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
12285-57

լու նկատառումով ուսումնասիրում են արտասահմանյան պատենտային և ընդհանրապես տեխնիկական գրականությունը.

դ) աջակցություն են ցույց տալիս ոգտակար գյուտերի և տեխնիկական կատարելագործումների հեղինակներին.

ե) ղեկավարում են գյուտարարական ստորադաս մարմիններին:

16. Առանձին ձեռնարկություններին կից գյուտարարական մարմինները կատարում են հետևյալ աշխատանքը.

ա) գյուտերի ու կատարելագործումների տեխնիկական մշակման գործում աջակցում են տվյալ ձեռնարկության աշխատողներին, ինչպես նաև այն անձանց, վորոնք տվյալ ձեռնարկության գործունեության վերաբերյալ առաջարկներ են ներկայացնում, ոգնում են ձևակերպելու հեղինակի վկայական և որենքով նախատեսված արտոնություններ ստանալու համար տրվող հայտարարությունները. Գյուտարարի խնդրանքով՝ այս մարմինները պարտավոր են իրենց վրա վերցնել գյուտարարի իրավունքների ձևակերպման, անգամ նրա անվան հեղինակի վկայական ստանալու ամբողջ հոգսը.

բ) ձեռնարկությունում գյուտարարության զարգացման նպաստող միջոցներ են ձեռք առնում. մասնավորապես մշակում են գյուտարարներին տրվելիք առաջադրությունները, այն շաղկապելով տվյալ ձեռնարկության ռացիոնալացման և վերակառուցման պլաններին, ոժանդակություն են ցույց տալիս գյուտարարական կոլեկտիվներին և այլն.



գ) միջոցներ են ձեռք առնում ժամանակին ու լրիվ ոգտագործելու յուրաքանչյուր ոգտակար գյուտն ու տեխնիկական կատարելագործումը.

դ) փորձի փոխանակման նկատառումով վերադաս մարմնին հայտնում են տվյալ ձեռնարկությունում ոգտագործվող գյուտերի ու կատարելագործումների մասին:

17. Գյուտերն ու կատարելագործումները գիտական-տեխնիկական մշակման յենթարկելու և փորձարկելու, ինչպես նաև պլանաչափ ձևով նոր գյուտեր ու կատարելագործումներ վորոնելու նպատակով կազմակերպվում են գործարանային լաբորատորիաներ, փորձնական գործարաններ և ցեխեր, կոնստրուկտորական բյուրոներ և այլն. միաժամանակ ամեն կերպ ոգտագործվում են գիտական-հետազոտական ինստիտուտները:

18. Գերատեսչական, ճյուղային և գործարանային գյուտարարական մարմինները միանում են ռացիոնալացման մարմիններին: Նրանց միացման ձևերը սահմանում է ԽՍՀՄ Բանգյուղտեսչությունը:

19. Գերատեսչական, ճյուղային և գործարանային գյուտարարական մարմինները պետք է կոմպլեկտավորել անհրաժեշտ կադրերով, այդպիսիք վերցնելով գյուտարարներից, հարվածայիններից և հասարակական աշխատող մասնագետներից:

## III ԲԱԺԻՆ

## ՈԳՏԱԿԱՐ ԳՅՈՒՏԵՐԻ ՅԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՈԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ.

20. *ԱՊԽ-ին կից Գյուտարարական Կոմիտեյի նորությունների բյուրոյին ներկայացված գյուտերից ԽՍՀՄ ժողտնտեսության համար ոգտակար գյուտերն ընտրելու գործը դրվում է ճյուղային գյուտարարական մարմինների վրա (հոդ. 15)։ Այս մարմինները, նորությունների բյուրոյից ստանալով հայտարարության մեկ որինակը անհրաժեշտ հավելվածներով, մեկ ամսվա ընթացքում գյուտի ոգտակարության մասին վորոշում են հանում։*

*Նորությունների բյուրոն, եքսպերտ հանձնաժողովի միջոցով քննարկելով գյուտերի նորությունը, պարտավոր է նրանց ոգտակարությունը գնահատող մարմինների ուշադրությունը հրավիրել այն գյուտերի վրա, վորոնք բյուրոյի կարծիքով կարող են խոշոր նշանակություն ունենալ Խ. Միության ժողովրդական տնտեսության համար։*

Ծանոթություն.— *Այն դեպքերում, յերբ տվյալ գյուտը շոշափում է զանազան ճյուղերի շահերը, ինչպես նաև այն դեպքերում, յերբ տվյալ ճյուղում կան մի քանի միավորություններ, ապա գյուտերի ոգտակարությունը գնահատելու պարտականությունն ունեցող մարմինների ճիշտ ցուցակը և այդ գնահատումն կատարելու ու գյուտերի ոգտակարության պլանը կազմելու կարգը սահմանվում են ԱՊԽ-ին կից գյուտարարական կոմիտեյի հրահանգով։*

*Այն դերատեսչություններում, վորտեղ նպատակահարմար կհամարվի ճյուղային գյուտարարական մարմիններ կազմակերպել, նրանց փոխարինում են համապատասխան ժողկոմատներին կից գյուտարարական մարմինները։*



21. *Գյուտի ոգտակարության վերոհիշյալ կարգի սահմանումը վերջնական է այն դեպքերում, յերբ գյուտը արդեն փորձարկված է կամ փորձարկման կարիք չի զգում. մնացած բոլոր դեպքերում այդ սահմանումը նախնական է համարվում։*

*Հիմնվելով գյուտի ոգտակարությանը վաղորոք սահմանված լինելու հանգամանքի վրա, ճյուղային գյուտարարական մարմինը, առանց սպասելու նորությունների բյուրոյի պարզաբանմանը, անմիջապես ձեռնարկում է տվյալ գյուտի անհրաժեշտ մշակման ու փորձարկման աշխատանքին։ Իսկ գյուտի ոգտակարության վերջնական գնահատումը կատարվում է այն ժամանակ միայն, յեթե կպարզվեն փորձարկման արդյունքները։*

22. *Ճյուղային մարմինը գյուտի մշակման, փորձարկման և մոդելի կամ փորձնական որինակի պատրաստման գործը կազմակերպում է փորձնական գործարաններում կամ ցեխերում, կամ ձեռնարկություններից մեկն ու մեկում և այլն։ Հարկ յեղած դեպքում՝ բարդ և խոշոր գյուտերի մշակումն ու փորձարկումը հանձնարարվում է համապատասխան գիտա-հետազոտական ինստիտուտներին և մտցվում է նրանց աշխատանքի պլանի մեջ։*

*Յեթե գյուտն արդեն փորձարկված է ձեռնարկության կամ այլ շահագրգռված մարմնի կողմից, այդ դեպքում ճյուղային գյուտարարական մարմինը պար-*

վում է ստացված արդյունքները և վորոշում, թե անհրաժե՞շտ է արդյոք լրացուցիչ փորձարկում ու մշակում, թե վոչ։

23. Գյուտարարն իրավունք ունի ներկա լինել իր գյուտի օգտակարության հարցը քննելու ժամանակ (թե նախնական և թե վերջնական քննությունների)։ Յեթե նա ապրում է այն վայրում, վորտեղ քննվում է նրա գյուտի օգտակարության հարցը, ապա նրան վաղորոք տեղեկացնում են հարցի քննության որվա մասին։ Յեթե գյուտարարի ներկայությունը անհրաժեշտ է, ապա նրան պետք է կանչել անկախ այն բանից, թե վորտեղ է նա ապրում, մատնանշելով հանդերձ նրա ներկայության անհրաժեշտությունը. այս դեպքում վճարվում են նրա գալստյան հետ կապված ծախսերը։

Գյուտի օգտակարության հարցի քննարկմանը մասնակցելու իրավունք ունեն համապատասխան պրոֆմիութենական կազմակերպությունների և գյուտարարական միավորությունների ներկայացուցիչները։

24. Գյուտարարը հրավիրվում է մասնակցելու գյուտի մշակման ու փորձարկման աշխատանքին։

Գյուտարարին հրավիրելու կարգն ու ժամանակը սահմանում է այն մարմինը, վորը կատարում է մշակումն ու փորձարկումը։

Վարձու աշխատանք կատարող գյուտարարը գյուտի մշակմանն ու փորձարկմանը մասնակցելու ամբողջ ժամանակամիջոցում պահպանում է իր պաշտոնը։

Ըստ վորում, յեթե մշակումն ու փորձարկումը կատարվում է այն ձեռնարկությունում կամ հիմնարկությունում, վորտեղ վարձու աշխատանք է կատարում գյուտարարը, ապա նա շարունակում է ձեռնարկու-



թյունից ստանալ իր աշխատավարձը՝ միջին վաստակի չափով։ Իսկ յեթե մշակումն ու փորձարկումը կատարվում է այլ ձեռնարկությունում կամ հիմնարկությունում, ինչպես նաև այն դեպքերում, յերբ գյուտարարը վարձու աշխատանք չի կատարում, ապա գյուտի մշակմանն ու փորձարկմանը մասնակցելու ժամանակի համար նա վարձատրություն է ստանում այն մարմնից, վորը կազմակերպել է մշակումն ու փորձարկումը։ Այս դեպքում վարձատրության չափը սահմանվում է ԱՊԽ-ին կից գյուտարարական կոմիտեյի հրահանգով, ըստ վորում վարձու աշխատանք կատարող անձանց վարձատրությունը նրանց միջին աշխատավարձից պակաս լինել չի կարող։

25. Ճյուղային մարմինը գյուտի օգտակարության հարցի մասին իր պատճառաբանված վորոշումը (թե նախնականը և թե վերջնականը) հաղորդում է հայտարարությունը ներկայացնողին։

Յեթե առաջարկը օգտակար չի ճանաչված այն նկատառումով, վոր այն ներկայացնողից անկախ՝ այդպիսին արդեն կիրառվում է տվյալ ճյուղում, ապա ճյուղային մարմինը վորոշման մեկ պատճենն ուղարկում է նաև նորությունների բյուրոյին։

26. Գյուտի օգտակարության հարցի առթիվ ճյուղային մարմնի ընդունած վորոշումը 3 ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել համապատասխան ժողկոմատին կից գյուտարարական մարմնի առաջ։ Գյուտարարների կազմակերպությունները կարող են բողոքարկել նաև նշված ժամկետից հետո։

Այն դեպքերում, յերբ ճյուղային գյուտարարական մարմին գոյություն չունի (20-րդ հոդվածի ծանոթու-

թյունը), կենտրոնական գերատեսչական մարմնի վորոշումը կարող է բողոքարկվել տվյալ ժողկոմատի կոլեգիայի առաջ:

27. Գյուտը վերջնականապես օգտակար ճանաչվելուց հետո, համապատասխան տնտեսական մարմինը կազմում է գյուտի օգտագործման պլանն ու անհրաժեշտ ծախքերի հաշիվը և այդ պլանը գործադրում է:

Խոշոր նշանակություն ունեցող գյուտերի (բացի գաղտնի գյուտերից) օգտագործման պլան կազմելու աշխատանքին անպայման պետք է մասնակից դարձնել գյուտարարին:

Յուրաքանչյուր օգտակար գյուտ պետք է կիրառվի տվյալ ճյուղի բոլոր այն ձեռնարկություններում, վորտեղ նա կարող է օգուտ տալ:

Գյուտի կենսագործման վերահսկողությունը դըրվում է ճյուղային գյուտարարական մարմնի վրա:

28. Ճյուղային միավորության կամ վարչության ղեկավարը և գերատեսչական գյուտարարական մարմինը անհրաժեշտության դեպքում պարտավոր են ժամանակին միջոցներ ձեռք առնել, վոր ուրիշ ճյուղերի և ուրիշ գերատեսչությունների ձեռնարկությունների արտադրական-ֆինանսական պլանների մեջ մտցվեն այն բոլոր աշխատանքները, վորոնցից կախված է գյուտի կատարումը:

29. Յեթե գյուտն արվում է ձեռնարկությունում կամ տրեստում, կամ առաջարկվում է ձեռնարկությանը կամ տրեստին և կարող է նրանց մոտ կիրառվել ու օգուտ տալ, ապա ձեռնարկությունը կամ տրեստը պետք է փորձարկեն և օգտագործեն այդ գյուտը, առանց



սպասելու ճյուղային մարմնի գնահատմանը, բայց նրան տեղեկացնելով:

30. Յեթե օգտակար է ճանաչվում այն գյուտը, վորի համար պատենտ ստանալու դիմում է ներկայացված, ապա ճյուղային մարմինը պարտավոր է գյուտարարի կամ նրա իրավատիրոջ հետ գյուտի իրավունքը զիջելու մասին բանակցություններ վարել: Սակայն մինչև պատենտ տալը չի կարելի գյուտի իրավունքի զիջման համար վարձատրել այնպիսի գումարով, վորը գերազանցի կատարելագործման համար տրվող պրեմիան (հոդ. 90):

Այն դեպքում, յերբ պատենտ ստանալու նպատակով ներկայացված գյուտի օգտակարությունը վերջնականապես գնահատելու համար փորձարկում է հարկավոր, ինչպես նաև այն դեպքում, յերբ գյուտի մշակման անհրաժեշտություն է զգացվում,— փորձարկումն ու մշակումը կատարվում են այն ժամանակ միայն, յերբ գյուտի իրավունքի զիջման առթիվ գյուտարարի հետ համաձայնություն է կայացված:

Յեթե գյուտը, համաձայն նախնական գնահատման, կարող է էական նշանակություն ունենալ պետության համար, բայց այն ներկայացնողի հետ համաձայնություն չի կայացված, ապա նրա մշակումն ու փորձարկումը թույլատրվում է ԱՊԽ-ին կից գյուտարարական կոմիտեյի վորոշմամբ:

Այն դեպքերում, յերբ գյուտը պետության համար էական նշանակություն ունի, բայց գյուտարարի կամ նրա իրավատիրոջ հետ իրավունքների զիջման համար համաձայնություն չի կայացված, ապա ճյուղային մարմինը գերատեսչական գյուտարարական մարմնի

միջոցով հարց է հարուցում ԱՊԽ-ին կից գյուտարարական կոմիտեի առաջ պատենտի պարտադիր օգտագործման կամ պարտադիր լիցենզիա տալու մասին (Ξ-րդ հոդված, «գ» կետ)։

31. Այն դեպքերում, յերբ առաջարկներ են լինում այնպիսի տեխնիկական կատարելագործումների մասին, վորոնք նոր գյուտեր չեն հանդիսանում, ապա ձեռնարկություններին կամ տրեստներին կից գյուտարարական մարմիններն ընդունում են այդ առաջարկները թե տվյալ ձեռնարկության կամ տրեստի աշխատողներից և թե կողմնակի մարդկանցից (վերջիններից այն դեպքում միայն, յերբ առաջարկը տվյալ ձեռնարկության կամ տրեստի աշխատանքին է վերաբերվում)։ Այս մարմինները վճռում են տվյալ ձեռնարկության կամ տրեստի աշխատանքին վերաբերող բոլոր առաջարկների օգտակարության հարցը և միջոցներ են ձեռք առնում օգտակար առաջարկները կենսագործելու համար։

32. Ձեռնարկություններին և տրեստներին կից գյուտարարական մարմինները պարտավոր են ճյուղային գյուտարարական մարմիններին իրազեկ դարձնել այն բոլոր՝ ըստ ամենայնի նշանակալից կատարելագործումների մասին, վորոնք ընդունված են ձեռնարկությունում կամ տրեստում օգտագործելու համար։

Այս առաջարկությունների նկատմամբ համապատասխան ձևով կիրառվում են 23, 25, 26, 27 և 28-րդ հոդվածները, իսկ լրացուցիչ փորձարկման և մշակման անհրաժեշտություն զգացվելու դեպքում՝ նաև 21, 22 և 24-րդ հոդվածները։

Յեթե առաջարկությունը ներկայացված է անմիջապես ճյուղային մարմնին, ապա նա, նայած առա-



ջարկի նշանակության, կամ այն փոխանցում է համապատասխան ձեռնարկությանը կամ տրեստին, կա՛մ ինքնուրույն կերպով վորոշում է նրա օգտագործությունը, անհրաժեշտության դեպքում կազմակերպում է նրա փորձարկումն ու մշակումը և միջոցներ է ձեռք առնում այն կենսագործելու նույն կարգով, վորպիսին սահմանված է գյուտերի համար։

33. Ոգտակար գյուտերի ու կատարելագործումների ընտրությունը կատարելիս հատկապես առանձնացվում են այնպիսի գյուտերն ու կատարելագործումները, վորոնք խոշոր նշանակություն ունեն Խ. Միության ժողովրդական տնտեսության համար։

34. Ճյուղային միավորության (վարչության) ղեկավարը խոշոր նշանակություն ունեցող յուրաքանչյուր գյուտի համար նշանակում է առանձին մարդ, վորը պատասխանատու պետք է լինի այդ գյուտի կենսագործման համար և պետք է հայտնի ԱՊԽ-ին կից գյուտարարական կոմիտեյին ու գերատեսչական կենտրոնական գյուտարարական մարմնին։

35. Յեթե ժողովրդական տնտեսության համար օգտակար ճանաչված գյուտը օգտակար ճանաչելու օրից սկսած կես տարվա ընթացքում չի կիրառվում, ապա ճյուղային գյուտարարական մարմինը այդ մասին հայտնում է ԱՊԽ-ին կից գյուտարարական կոմիտեյին և գերատեսչական կենտրոնական գյուտարարական մարմնին։ Ըստ վորում պետք է մատնանշել, թե ինչո՞ւ գյուտը չի իրագործվել։

Յեթե խոշոր նշանակություն ունեցող գյուտը կամ կատարելագործումը կես տարվա ընթացքում չի կի-

բառվի, նույն ձևով պետք է հայտնել նաև ԽՍՀՄ Բանգյուղտեխչությանը։

Ծանոթություն.— Այն դեպքերում, երբ գյուտի օգտակարության նախնական գնահատում է կատարվում (հոդ. 21), ապա կիսամյա ժամկետը հաշվվում է նախնական վորոշում ընդունելու օրից։

36. Տվյալ ճյուղում, տրեստում և առանձին ձեռնարկությունում գյուտի ու կատարելագործման արագ, լիակատար և ճիշտ օգտագործման պատասխանատվությունն ընկնում է միավորության (վարչության), տրեստի և ձեռնարկության ղեկավարի վրա։

37. Գյուտարարությանն օժանդակելու, գյուտն ու կատարելագործումը մշակելու և փորձարկելու և նրանց հեղինակներին պարգևատրելու ծախքերը ծածկվում են հատուկ ֆոնդերի հաշվին։

Այս ֆոնդերի կազմության ու ծախսման կարգը վորոշվում է հատուկ օրենքով։

Գյուտերի և կատարելագործումների կիրառման համար անհրաժեշտ ծախքերը նախատեսվում են արտադրական-ֆինանսական պլաններում։

## IV ԲԱԺԻՆ

## ԳՅՈՒՏԵՐԻ ՀԱՅՏԱՐԳԸ ՅԵՎ ՆՐԱՆՑ ՆՈՐՈՒԹՅԱՆ ԵՔՍՊԵՐՏ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ԳՅՈՒՏԻ ՀԱՄԱՐ ՀԵՂԻՆԱԿԻ ՎԿԱՅԱԿԱՆ ՊԱՀԱՆՋԵԼՈՒ ԴԵՊՔԵՐՈՒՄ

38. Գյուտի համար հեղինակի վկայական ստանալու մասին հայտարարություն ներկայացնել կարող է միայն ինքը գյուտարարը, իսկ նրա մահացման դեպքում՝ նրա ժառանգը։



Գյուտարարի կամ նրա ժառանգների համաձայնությամբ հեղինակի վկայական ստանալու հայտարարությունը նրանց անունից պետք է ներկայացվի այն ձեռնարկություններին և հիմնարկություններին, վորտեղ նրանք աշխատում են, ինչպես նաև վորևէ գյուտարարական մարմնին, վորի հետ տվյալ գյուտն իր բնույթով առնչական է։

Ծանոթություն.— Հայտարարություն տվողը հետագայում պետք է նշի այն անձին, վորի անունից տրված է հայտարարությունը, այսինքն՝ գյուտարարին կամ նրա ժառանգին։

39. Գյուտի հայտարգի համար գրավոր դիմում է ներկայացվում ԱՊԽ–ին կից գյուտարարական կոմիտեյի նորությունների բյուրոյին։

Դիմումի մեջ պետք է մատնանշել գյուտի նկարագրությունը, գյուտի առարկան, ինչպես նաև խնդրատուի անունն ու հասցեն։

Դիմումին պետք է կցել գյուտի նկարագրությունը անհրաժեշտ գծագրումներով։

Նկարագրության մեջ գյուտի էությունը պետք է բացատրել այնքան պարզ, հստակ ու լրիվ, վոր այդ նկարագրության վրա հիմնվելով տեղյակ անձինք կարողանան գյուտն իրագործել։ Մասնավորապես պետք է մատնանշել այն էական տարրերի հատկանիշները, վորոնց մեջ ինքը գյուտարարը գտնում է գյուտի նորությունը (գյուտի ֆորմուլան)։

Միաժամանակ գյուտարարը կարող է տալ գյուտի իրագործելիության, նրա կիրառման ծավալի և նշանակության վերաբերյալ իր նկատառումները։

Դիմումը և նրան կցված նկարագրությունը ու գծ–

ծագրումները 3 որինակով ներկայացվում են նորությունների բյուրոյին։

Յեթե հայտարքը չի բավարարում այն պահանջները, վորոնք նշված են ներկա հրահանգում, ապա տասն որյա ընթացքում պետք է առաջարկել դիմում տվողին լրացնելու հայտարքը պակասորդ նյութերով և տալ դրա համար անհրաժեշտ ժամկետ, բայց վոչ ավելի, քան 2 ամիս։

40. Հայտարարությունը տալուց հետո մեկ ամսվա ընթացքում դիմողը կարող է լրացնել և ճշտել ներկայացված նկարագրությունն ու գծագրումները, առանց հայտարքն ըստ եյության փոփոխելու։ Լրացումներն ու ճշտումները ներկայացվում են 3 որինակով։

Դիմողի խնդրանքով նորությունների բյուրոն կարող է մինչև 3 ամիս յերկարացնել լրացումների և ճշտումների ժամկետը։

41. Յեթե հայտարքի նախնական քննարկման ժամանակ նորությունների բյուրոն կգտնի, վոր առաջարկը սխալ է, կամ բացահայտորեն անիրագործելի ու վոչ նոր, ապա նա ընդհատում է գործի քննարկումը։ Այդ մասին հայտնվում է դիմողին, մատնանշելով գործի կարճման հիմունքները։

Գործի կարճման վորոշումը մեկ ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել գյուտարարական կոմիտեյի բողոքների խորհրդի առաջ։

42. Յեթե հայտարքը պարունակում է բոլոր անհրաժեշտ տեղեկությունները ու նյութերը, թեկուզ և մեկ որինակով, և նախնական քննարկման ժամանակ սխալ կամ բացահայտորեն անիրագործելի ու վոչ նոր չի համարվի, ապա նորությունների բյուրոն դիմողին՝



նրա հայտարքի առաջնության (պրիորիտետի) մասին տեղեկանք է տալիս։ Տեղեկանքում մատնանշվում է հայտարարված գյուտի անունը, հեղինակի ու դիմողի անունը և հայտարքի որը։

Միաժամանակ նորությունների բյուրոն ճյուղային գյուտարարական մարմնին ուղարկում է դիմումի, նյութի նկարագրության և գծագրումների մեկական որինակները, ցույց տալով հայտարքի որը։ Դիմումի նկարագրության և գծագրումների մեկ որինակն ուղարկվում է նաև ճյուղային մարմնին այն դեպքում, յերբ նորությունների բյուրոն, նկատի ունենալով նյութի նորության բացահայտ բացակայությունը, դադարեցնում է հայտարքի քննարկումն իր գծով։

Ծանոթություն.— Յեթե դիմումը և անհրաժեշտ հավելվածները յերեք որինակից պակաս են ներկայացված, ապա նորությունների բյուրոն այն ուղարկում է ճյուղային մարմնին՝ դիմում տվողից պակասորդ պատճեններն ստանալու համար, իսկ յեթե գյուտն եյական նշանակություն ունի՝ ինքն է պատճեն հանում։

43. Հայտարքի առաջնության (պրիորիտետի) որը հաշվվում է այն որվանից, յերբ հայտարքը հասել է նորությունների բյուրոն, իսկ վիճելի դեպքերում՝ յերբ հայտարքը հանձնվել է փոստին։ Յեթե հայտարքին կցված չեն յեղել նկարագրությունն ու անհրաժեշտ գծագրումները, ապա հայտարքի որը հաշվվում է այն որվանից, յերբ նկարագրությունն ու գծագրումները հասել են նորությունների բյուրոն կամ հանձնվել են փոստին։

44. Հայտարքի առաջնության մասին տեղեկանքը, կամ հայտարքի լրացման առաջարկը, կամ նախնա-

կան քննարկման ժամանակ գործի կարճման աղդարքը (հոդ.41) պետք է ուղարկել հայտարքը ներկայացնողին վոչ ուշ, քան հայտարքի ստացումից հետո տասն օրվա ընթացքում:

45. Յուրաքանչյուր հայտարք նորությունների բյուրոյում հետազոտման է յենթարկվում, վորպիսին նպատակ ունի պարզելու, թե տվյալ առաջարկը նորո՞ւթյուն է արդյոք, թե վոչ:

46. Նոր չի համարվի այն գյուտը, վորը նախքան հայտարքը կիրառվել է Ս. Միության սահմաններում կամ արտասահմանում, կամ տպագրված է նրա նկարագրությունը, կամ այլ ճանապարհով հրապարակվել է այն աստիճան, վոր նրա իրագործումը մատչելի յե դարձել անդյալ անձանց համար:

Սակայն, հեղինակի վկայական կարող է տրվել՝

ա) յեթե դիմողը վոչ ավելի, քան վեց ամսվա ընթացքում մինչև հայտարքը Ս. Միության սահմաններում բանավոր կամ գրավոր զեկուցումներ է տվել գիտա-հետազոտական հիմնարկություններում, գյուտարարական մարմիններում և կամ այն ձեռնարկություններում, վորտեղ կարելի յե պատրաստել, փորձել կամ ոգտագործել տվյալ գյուտը.

բ) յեթե նույն ժամանակամիջոցում տվյալ գյուտը փորձարկման կամ կատարելագործման նպատակով կիրառվել է Ս. Միության սահմաններում:

Առանց գյուտարարի համաձայնության՝ մինչև հայտարքը գյուտի հրապարակելը քրեական պատասխանատվության է յենթարկվում: Գյուտի նման հրապարակումը գյուտարարին չի զրկում հեղինակի վկայական ստանալու իրավունքից:



47. Եքսպերտ քննության համար հիմք պետք է ծառայեն՝ առաջներում տրված թե՛ խորհրդային և թե՛ նախախորհրդային հեղինակի վկայականներն ու պատենտները և առաջներում ներկայացված հայտարքները, նորությունների բյուրոյի տրամադրության տակ յեղած արտասահմանյան գրականությունը, ինչպես նաև Ս. Միության սահմաններում հրատարակված տեխնիքական գրականությունը և փորձագետներին մատչելի արտասահմանյան տեխնիքական գրականությունը:

48. Միասնաբար գյուտ անող անձինք իրավունք ունեն ստանալու բոլորի անունով մեկ գյուտարարի վկայական:

Այդ կատեգորիայի մեջ չեն մտնում այն անձինք, վորոնք միայն տեխնիքական ոգնություն են ցույց տվել:

49. Յեթե գյուտն արված է ձեռնարկությունում կամ կազմակերպությունում և չեն կարող վորոշել նրա հեղինակներին (գործարանային գյուտ), ապա հեղինակի վկայականը տրվում է ձեռնարկության կամ կազմակերպության անունով: Այս դեպքում գյուտի վարձատրությունը տրվում է տվյալ ձեռնարկության բանվորական կոլեկտիվին:

50. Նորության եքսպերտ քննությունը կատարվում է հերթականության կարգով և ավարտվում է վոչ ուշ, քան հայտարքի օրից հետո վեց ամսվա ընթացքում:

51. Հեղինակի վկայական տալու մասին նորությունների բյուրոյի ընդունած վորոշումը հինգ օրվա ընթացքում ուղարկվում է դիմում տվողին:

Գյուտի էության (գյուտի ֆորմուլայի) մասին բյուրոյի տված բացատրությանը չհամաձայնվելու

դեպքում դիմողն իրավունք ունի վորոշումն ստանալուց հետո մեկ ամսվա ընթացքում բյուրոյին ուղարկել իր առարկությունները։ Դիմողն իրավունք ունի անձամբ կամ իր լիազորած անձանց և կազմակերպությունների միջոցով ծանոթանալու այն բոլոր նյութերին, վորոնց հիման վրա բյուրոն վորոշում է ընդունել, ինչպես նաև կարող է պահանջել, վոր այդ նյութերի պատճեն ձրի ուղարկեն իրեն։ Վերջին դեպքում առարկություններ ներկայացնելու ժամկետը հաշվվում է այն որվանից, յերբ դիմողն ստանում է նյութերը։

Յեթե դիմողը սահմանված ժամկետին առարկություններ չի ներկայացնում, ապա նորությունների բյուրոն նրան հեղինակի վկայական է տալիս, վորի մեկ պատճեն ուղարկում է ճյուղային գյուտարարական մարմնին։

Նորությունների բյուրոն դիմողի առարկությունները քննում է մեկ ամսվա ընթացքում և վորոշում է ընդունում, վորի մասին հայտնում է դիմողին։ Դիմողը մեկ ամսվա ընթացքում կարող է այդ վորոշումը բողոքարկել բողոքների խորհրդի առաջ, վորը բողոքը պետք է քննի վոչ ուշ, քան այն ստանալուց հետո մեկ ամսվա ընթացքում։

Համաձայն բողոքի առթիվ ընդունված վորոշման նորությունների բյուրոն հեղինակին վկայական է տալիս և նրա պատճեն ուղարկում է ճյուղային գյուտարարական մարմնին։

52. Հեղինակի վկայական տալու մերժման մասին նորությունների բյուրոյի հանած վորոշումը պետք է հաղորդվի դիմողին, վորը կարող է յերեք ամսվա



ընթացքում այդ մերժումը բողոքարկել բողոքների խորհրդի առաջ։

Դիմողն իրավունք ունի անձամբ կամ իր լիազորած անձանց ու կազմակերպությունների միջոցով ծանոթանալու այն նյութերին, վորոնց վրա հիմնվելով նորությունների բյուրոն մերժել է հեղինակի վկայական տալ, ինչպես նաև կարող է պահանջել, վոր այդ նյութերի պատճենները ձրի ուղարկվեն իրեն։

53. Ամեն մի պետական մարմին, կոոպերատիվ կամ այլ հասարակական կազմակերպություն և յուրաքանչյուր անձնավորություն հեղինակի վկայական տալու վորոշման հրապարակումից հետո յերեք տարվա ընթացքում կարող է բողոքել հեղինակի վկայական տալու դեմ և առարկության յենթարկել այդ վկայականի գործոն լինելու հանգամանքը, ապացուցելով, վոր տվյալ գյուտը նորություն չէ։

Այն դեպքերում, յերբ վորոշումը չի հրապարակվում, բողոքի ժամկետը հաշվվում է հեղինակի վկայական տալու որվանից։

Այս բողոքները, մինչև վկայական տալը, տրվում են նորությունների բյուրոյին, իսկ վկայականի տրվելուց հետո՝ բողոքների խորհրդին։

54. Ամեն մի պետական մարմին, կամ հասարակական կազմակերպություն, կամ առանձին շահագրգռված անձնավորություն, հեղինակի վկայական տալու վորոշման հրապարակումից հետո յերեք տարվա ընթացքում կարող են առարկության յենթարկել վկայականը տվյալ դիմողին տալու հանգամանքը, ապացուցելով, վոր գյուտի իսկական հեղինակը այլ անձնավորություն կամ մի խումբ անձնավորություններ են։

Այն դեպքում, երբ վորոշումը չի հրապարակվում, առարկությունը թույլատրվում է հեղինակի վկայական տալու որվանից հաշված յերեք տարվա ընթացքում։

Այս առարկումները ներկայացվում են ընդհանուր դատական կարգով, միաժամանակ տեղեկացնելով նորությունների բյուրոյին։

55. Յեթե հեղինակման վերաբերյալ առարկումները հանդես են բերվում նախքան հեղինակի վկայական տալը, ապա նորությունների բյուրոն կատարում է գյուտի նորությունը սահմանելու համար անհրաժեշտ բոլոր գործողությունները, բայց հեղինակի վկայական տալը դադարեցնում է՝ մինչև դատարանը վճռի վեճը։

Յեթե առարկումները հանդես են գալիս հեղինակի վկայական տալուց հետո և դատարանը կգտնի, վոր հայտարքում նշված անձնավորությունը գյուտի հեղինակը չէ, ապա տրված վկայականը կհայտարարվի իբրև ուժից հանված։ Այս դեպքում նորությունների բյուրոն հեղինակի վկայական է տալիս այն անձնավորությանը, վորին դատարանը գտել է իբրև իսկական հեղինակ, պահպանելով առաջնությունը սկզբնական հայտարքի որվանից։

56. Բողոքների խորհրդի վորոշումները վերջնական են և բողոքարկման յենթակա չեն։

Այդ վորոշումները վերահսկողության կարգով կարող է վերանայել գյուտարարական կոմիտեն։

57. Հեղինակի վկայական տալու գործերի վերաբերյալ բոլոր դիմումներն ու փաստաթղթերը ազատ են վորևե հարկից։



## V ԲԱԺԻՆ

## ՊԱՏԵՆՏՆԵՐ ՏԱԼՈՒ ԿԱՐԳԸ

58. Պատենտ տալու հայտարքների ներկայացման և նրանց եքսպերտ քննության համար համապատասխան ձևով կիրառվում է այն կարգը, վորը ցույց է տրված IV բաժնում, հետևյալ առանձնահատկություններով։

59. Պատենտ տալու հայտարք կարող է ներկայացնել ինքը գյուտարարը կամ նրա իրավատերը, այսինքն՝ ժառանգները և այն անձինք, վորոնց գյուտարարը կամ նրա ժառանգները փոխանցել են գյուտի իրավունքը (հոդ. 7)։

60. Մշտապես արտասահմանում բնակվողները պատենտ տալու գործը վարելու համար պետք է լիազորեն մշտապես Խ. Միությունում բնակվող ներկայացուցչի։

ԱՊԽ-ին կից գյուտարարական կոմիտեն վորոշում է այն մարդկանց կատեգորիան, վորոնց կարող է հանձնարարվել ներկայացուցչությունը։

61. Պատենտ ստանալու համար տրվող դիմումի մեջ գյուտարարը կամ նրա իրավատերը պետք է նշեն, վոր պատենտ տալու խնդրում չկան այն արգելքները, վորոնք ցույց են տրված սույն կանոնադրության 6-րդ հոդվածում։

Յեթե գյուտարարն ոտարերկրացի յե և ապրում է արտասահմանում, ապա այդպիսի ցուցմունք չի պահանջվում։

Շահագրգռված պետական մարմինները և հասարակական կազմակերպությունները կարող են ընդհանուր դատական կարգով ապացուցել, վոր 6-րդ հոդվածում ցույց տրված պատճառներով գյուտարարն ի-

բավունք չունի պատենտ ստանալ և այդ հիման վրա կարող են պահանջել, որ տրված պատենտն ուժից հանվի: Այդպիսի հայցեր կարելի է ներկայացնել պատենտի ուժի մեջ լինելու ամբողջ ժամանակամիջոցում:

62. Յուրաքանչյուր հայտարք միայն մեկ գյուտի պետք է վերաբերի: Եթե այս պայմանը չի կատարված, ապա դիմողը հայտարքի առաջնությունը պահպանելու համար պարտավոր է, նորությունների բյուրոյի պահանջով և նրա սահմանած ժամկետում, ստորաբաժանել իր հայտարքը:

63. Եթե գյուտարարը պատենտային ֆորմուլայի հետ համաձայն չէ, պատենտ ստանալու խնդրում մերժում է ստացել և պահանջում է, վորպեսզի իրեն ուղարկեն այն նյութերի պատճեն, վորոնց վրա հիմնվելով նորությունների բյուրոն հանել է իր վորոշումը, ապա նա պարտավոր է հոգալ դրա հետ կապված ծախքերը:

64. Եթե էքսպերտ հանձնաժողովը հնարավոր կգտնի պատենտ տալը և գյուտի ֆորմուլայի առթիվ դիմողի հետ համաձայնություն կկայացվի, նորությունների բյուրոն «Вестник Комитета по изобретательству СТО» տեղեկագրում կհրապարակի դիմում տվողի ու գյուտարարի անունները և գյուտի ֆորմուլան: Միաժամանակ նորությունների բյուրոյում ցուցադրվում են՝ ի տես ցանկացողների՝ հայտարքին վերաբերյալ նկարագրությունն ու գծագրումները:

Գյուտի ֆորմուլայի այս նախնական հրապարակումից հետո յերեք ամսվա ընթացքում ամեն մի պետական մարմին, կոոպերատիվ կամ այլ կազմակերպություն, ինչպես նաև ամեն մի անձնավորություն կարող են պատենտ տալու դեմ բողոք ներկայացնել:



Բողոքը պետք է տրվի գրավոր մանրամասն պատճառաբանությամբ, կցելով անհրաժեշտ նյութերը:

Եթե մատնանշված ժամկետում բողոքներ չեն լինի, ապա բյուրոն տալիս է պատենտը:

Եթե բողոքներ լինում են, ապա նորությունների բյուրոն այն պետք է քննի յերկու ամսվա ընթացքում:

65. Եթե մինչև գյուտի ֆորմուլայի նախնական հրապարակումը (հոդ. 64) դիմողը պահանջ ներկայացնի, ապա հայտարքի մեկ որինակն գյուտի ոգտակարության գնահատման համար ճյուղային գյուտարարական մարմնին ուղարկելը հետաձգվում է:

66. Գյուտի նոր չլինելու կամ նրա հեղինակի ճիշտ չվորոշելու պատճառաբանությամբ տրված պատենտի դեմ առարկելը թույլատրվում է նրա ուժի մեջ լինելու ամբողջ ժամանակաշրջանում:

67. Գյուտի պատենտի գործերի համար գանձվում է՝

ա) պատենտ ստանալու համար տրված յուրաքանչյուր հայտարարությունից՝ հայտարքային տուրք.

բ) յուրաքանչյուր տրված պատենտից՝ տարեկան պատենտահարկ.

գ) տուրք՝ նորությունների բյուրոյի վորոշման բողոքարկման համար տրվող յուրաքանչյուր բողոքից.

դ) տուրք՝ գյուտի իրավունքի լիակատար կամ մասնակի փոխանցման մասին գյուտերի մատյանում նշելու համար տրվող յուրաքանչյուր հայտարարությունից:

Տուրքերի չափն ու վճարման կարգը վորոշում է Աշխատանքի և Պաշտպանության Խորհուրդը:

ԱՊԽ-ին կից գյուտարարական կոմիտեն կարող է

առանձին դեպքերում տուրքից ազատել աշխատավոր գյուտարարներին։

Տարեկան պատենտահարկը ժամկետին չվճարելը ուժից հանում է պատենտը։

## VI ԲԱԺԻՆ

## ԼՐԱՑՈՒՑԻՉ ԳՅՈՒՏԵՐ

68. Գյուտը լրացուցիչ է համարվում, յեթե նա հեղինակի վկայական կամ պատենտ ստացած այլ (հիմնական) գյուտերի կատարելագործումն է և առանց հիմնական գյուտի կիրառման ինքնուրույն կերպով օգտագործվել չի կարող։

69. Յեթե հիմնական գյուտի համար հեղինակի վկայական է տրված, ապա լրացուցիչ գյուտի համար տրվում է հեղինակի առնչական (зависимое) վկայական։

Ըստ վորում լրացուցիչ գյուտի հայտարքը, վորը հիմնական գյուտի հեղինակը ներկայացրել է չորս ամսվա ընթացքում՝ մինչև հեղինակի վկայական տալը, նույն ժամանակամիջոցում նույնպիսի գյուտի համար այլ անձի կողմից ներկայացված հայտարքի հանդեպ առաջնություն (պրիորիտետ) է վայելում։

70. Յեթե այն հիմնական գյուտը, վորի համար հեղինակի վկայական է տրված, ժողովրդական տնտեսության համար օգտակար չի ճանաչված, բայց լրացուցիչ գյուտի շնորհիվ օգտակար կարող է ճանաչվել, այդ դեպքում վարձատրությունը տրվում է յերկու (հիմնական և լրացուցիչ) գյուտերի հեղինակներին։

Այս դեպքում վարձատրման կարգը սահմանվում



է ԱՊԽ-ին կից գյուտարարական կոմիտեյի հրահանգով (հոդ. 90)։

71. Յեթե հիմնական գյուտը պատենտ է ստացել, ապա լրացուցիչ գյուտի համար դիմողի ընտրությամբ տրվում է առնչական պատենտ կամ հեղինակի առնչական վկայական։ Ըստ վորում լրացուցիչ գյուտի օգտագործումը թույլատրվում է միմիայն հիմնական գյուտի պատենտատիրոջ համաձայնությամբ։

Հեղինակի առնչական վկայական ստացողի վարձատրությունը տրվում է ընդհանուր հիմունքներով և այն ժամանակ միայն, յերբ պետությունը հիմնական գյուտն իրագործելու իրավունք կստանա։

Առնչական պատենտը տրվում է այնքան ժամանակով, վորքան ուժի մեջ է հիմնական պատենտը։

72. Յեթե հիմնական պատենտի ուժի մեջ լինելու ժամկետը կրճատվում է լրացուցիչ գյուտին չվերաբերող պատճառներով, ապա առնչական պատենտն ու հեղինակի վկայականը ինքնուրույն են դառնում։ Այս դեպքում առնչական պատենտն ուժի մեջ է մնում այն ժամկետով, վորպիսին տրված է հիմնական պատենտի համար։

Մյուս բոլոր խնդիրներում առնչական պատենտը հավասարեցվում է ինքնուրույն պատենտին։

## VII ԲԱԺԻՆ

## ԳՅՈՒՏԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆ ՈՒ ԳՅՈՒՏԵՐԻ ՄԱՏՅԱՆԸ

73. Նորությունների բյուրոյում ստացվող բոլոր հայտարքների մասին, բացի գաղտնիներից, առաջնության վերաբերյալ տեղեկանք տալուց հետո, հրապարակվում է « Вестник Комитета по изобрет. при СТО» տեղեկագրում։ Հրապարակման մեջ մատնանշվում է՝

գյուտի անունը, հեղինակի և դիմողի անունը, հայտարարքի որը և այն ճյուղային մարմինը, վորին ուղարկված է հայտարարքի մեկ օրինակը նրա օգտակարությունը գնահատելու համար։

74. Գաղտնի գյուտերից բացի, մնացածների համար պատենտ և հեղինակի վկայական տալու մասին ընդունված և ուժի մեջ մտած վորոշումները հրապարակվում են « Вестник Комитета по изобрет. при СТО» տեղեկագրում։

75. Հեղինակի վկայական և պատենտ ստացած գյուտերի նկարագրությունները ու գծագրումները (բացի գաղտնի գյուտերից) Գյուտարարական Կոմիտեն հրապարակում է բրոշյուրների ձևով, վորոնք Խ. Միության գյուտերի ամփոփ ժողովածուներ են հանդիսանում։

76. ԱՊԽ-ին կից Գյուտարարական Կոմիտեյի նորությունների բյուրոն պահում է գյուտերի (բացի գաղտնիներից) մատյան։ Ամեն մի ցանկացող կարող է ծանոթանալ այդ մատյանին, ինչպես նաև հեղինակի վկայական և պատենտ ստացած գյուտերի նկարագրություններին ու գծագրումներին։

77. Հեղինակի վկայական և պատենտ տալու վորոշումների, ինչպես նաև նկարագրությունների ու գծագրումների հրապարակումը շահագրգռված մարմինների և անձանց պահանջով կարող է առժամանակ հետաձգվել, կամ, Գյուտարարական Կոմիտեյի վորոշմամբ, բոլորովին վերացվել։

Գյուտարարական Կոմիտեն կարող է նույնպես առժամանակ հետաձգել կամ բոլորովին վերացնել առանձին գյուտերի նկարագրությունների և գծագրումների ցուցադրումը։



# VIII ԲԱԺԻՆ

## ԳԱՂՏՆԻ ԳՅՈՒՏԵՐ ՅԵՎ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄՆԵՐ

78. Պետական պաշտպանության վերաբերող գյուտերն ու կատարելագործումները համարվում են գաղտնի։

Բացի այդ, Գյուտարարական Կոմիտեն, իր հայեցողությամբ կամ շահագրգռված գերատեսչության և ճյուղային մարմնի պահանջով, կարող է գաղտնի համարել վորևե գյուտ, վորի թաքուն պահելը պահանջում են պետության շահերը։ Նոր գյուտ չհանդիսացող կատարելագործումը կարող է շահագրգռված ժողկոմատի կամ ճյուղային միավորության (վարչության) վորոշմամբ գաղտնի համարվել։

79. Գյուտը գաղտնի հայտարարելու մասին անմիջապես հաղորդվում է դիմողին, հեղինակին և շահագրգռված ճյուղային գյուտարարական մարմնին, վորն իր հերթին իրազեկ է դարձնում համապատասխան ձեռնարկություններին, գիտա-հետազոտական ինստիտուտներին ևայլն։ Ճիշտ այդպես էլ շահագրգռված ժողկոմատը կամ ճյուղային մարմինը տեխնիկական կատարելագործումը գաղտնի համարելու մասին հաղորդում է այդ կատարելագործումն առաջարկողին և համապատասխան ձեռնարկություններին։

80. Քրեական պատասխանատվության յենթարկելու գնով արգելվում է գաղտնի գյուտերի և կատարելագործումների մասին տեղեկություններ տալել մամուլում, կամ վորևե կերպ հրապարակել նրանց էությունը։

81. Գաղտնի գյուտը կամ կատարելագործումը կա-

րելի չի առաջարկել միայն Ս. Միության շահագրգռված պետական մարմնին: Նմանապես, գաղտնի գյուտը կամ կատարելագործումը կարող է օգտագործել միմիայն Ս. Միության շահագրգռված պետական մարմինը:

82. Գյուտի կամ կատարելագործման գաղտնի լինելը կարող է վերացվել այն կարգով, ինչ կարգով սահմանվում է:

83. Պետական պաշտպանության համար նշանակություն ունեցող գյուտի հեղինակը պարտավոր է հայտարքը անձամբ հանձնել կամ ԱՊԽ-ին կից գյուտարարական կոմիտեյի հատուկ բաժնին, կամ Միացյալ Պետական Քաղվարչության տեղական մարմնին, կամ տեղական ռազմական վարչությանը՝ անմիջապես գաղտնի կարգով ԱՊԽ-ին կից գյուտարարական կոմիտեյին ուղարկելու համար:

84. Երկրի պաշտպանության վերաբերող գաղտնի գյուտերից և կատարելագործումներից օգտակարները ջոկելու, նրանց նորությունը սահմանելու, գաղտնի լինելը վերացնելու, ինչպես նաև այդ գործերին վերաբերյալ վորոշումները բողոքարկելու կարգը սահմանվում է հատուկ հրահանգով:

Այդ հրահանգը հրապարակում է ԱՊԽ-ին կից գյուտարարական կոմիտեն՝ Ռազմա-ծովային Ժողկոմատի համաձայնությամբ:

## IX ԲԱԺԻՆ

## ԳՅՈՒՏԵՐԻ ՊԱՏԵՆՏԱՎՈՐՈՒՄՆ ՈՒ ԻՐԱՑՈՒՄԸ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՈՒՄ

85. Ս. Միության սահմաններում արված գյուտե-



րի, ինչպես նաև պետության կողմից գործուղվողների արտասահմանում կատարած գյուտերի համար արտասահմանում պատենտ տալն ու իրացնելը կատարվում է բացառապես ԱՊԽ-ին կից գյուտարարական կոմիտեյի թույլտվությամբ և նրա սահմանած կարգով:

Այս կանոնի խախտումը քրեական պատասխանատվության է յենթարկվում:

86. Արտասահմանում արվող գյուտերի հեղինակների իրավունքների պաշտպանության խնդրում հեղինակի վկայականը հավասարեցվում է պատենտին:

## X ԲԱԺԻՆ

## ՀԵՂԻՆԱԿԻ ՎԿԱՅԱԿԱՆ ՍՏԱՑԱԾ ԳՅՈՒՏԵՐԻ ՅԵՎ ՏԵԽՆԻՔԱԿԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄՆԵՐ ԱՌԱՋԱՐԿՈՂ ԱՆՁԱՆՑ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

87. Հեղինակի վկայականի արժանացող օգտակար գյուտի հեղինակի վարձատրությունը սահմանվում և վճարվում է գյուտարարական ճյուղային մարմնի միջոցով:

88. Յեթե ձեռնարկությունն սկսում է գյուտի իրագործումը՝ նախքան նրա օգտակարության սահմանումը ճյուղային մարմնի կողմից, ապա նա վարձատրում է գյուտարարին, համաձայն կատարելագործումների պարգևատրման կանոնների (հոդ. 90):

89. Տեխնիքական կատարելագործման համար պարգևատրում է այն ձեռնարկությունը, վորն օգտագործում է տվյալ կատարելագործումը: Իսկ յեթե այն օգտագործում են տվյալ ճյուղի մի քանի ձեռնարկությունները, ապա պրեմիան սահմանվում ու վորոշվում

րելի չի առաջարկել միայն Խ․ Միության լիազորված պետական մարմնին։ Նմանապես, գաղտնի գյուտը կամ կատարելագործումը կարող է օգտագործել միայն Խ․ Միության լիազորված պետական մարմինը։

82․ Գյուտի կամ կատարելագործման գաղտնի լինելը կարող է վերացվել այն կարգով, ինչ կարգով սահմանվում է։

83․ Պետական պաշտպանության համար նշանակություն ունեցող գյուտի հեղինակը պարտավոր է հայտարքը անձամբ հանձնել կամ ԱՊԽ-ին կից գյուտարարական կոմիտեի հատուկ բաժնին, կամ Միացյալ Պետքաղվարչության տեղական մարմնին, կամ տեղական ռազմական վարչությանը՝ անմիջապես գաղտնի կարգով ԱՊԽ-ին կից գյուտարարական կոմիտեին ուղարկելու համար։

84․ Յերկրի պաշտպանության վերաբերող գաղտնի գյուտերից և կատարելագործումներից օգտակարները ջոկելու, նրանց նորությունը սահմանելու, գաղտնիները վերացնելու, ինչպես նաև այդ գործերին վերաբերյալ վորոշումները բողոքարկելու կարգը սահմանվում է հատուկ հրահանգով։

Այդ հրահանգը հրապարակում է ԱՊԽ-ին կից գյուտարարական կոմիտեն՝ Ռազմա-ծովային ժողկոմատի համաձայնությամբ։

## IX ԲԱԺԻՆ

## ԳՅՈՒՏԵՐԻ ՊԱՏԵՆՏԱՎՈՐՈՒՄՆ ՈՒ ԻՐԱՑՈՒՄԸ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՈՒՄ

85․ Խ․ Միության սահմաններում արված գյուտե-



րի, ինչպես նաև պետության կողմից գործուղվողների արտասահմանում կատարած գյուտերի համար արտասահմանում պատենտ տալն ու իրացնելը կատարվում է բացառապես ԱՊԽ-ին կից գյուտարարական կոմիտեի թույլտվությամբ և նրա սահմանած կարգով։

Այս կանոնի խախտումը քրեական պատասխանատվության է յենթարկվում։

86․ Արտասահմանում արվող գյուտերի հեղինակների իրավունքների պաշտպանության խնդրում հեղինակի վկայականը հավասարեցվում է պատենտին։

## X ԲԱԺԻՆ

## ՀԵՂԻՆԱԿԻ ՎԿԱՅԱԿԱՆ ՍՏԱՑԱԾ ԳՅՈՒՏԵՐԻ ՅԵՎ ՏԵԽՆԻՔԱԿԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄՆԵՐ ԱՌԱՋԱՐԿՈՂ ԱՆՁԱՆՑ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

87․ Հեղինակի վկայականի արժանացող օգտակար գյուտի հեղինակի վարձատրությունը սահմանվում և վճարվում է գյուտարարական ճյուղային մարմնի միջոցով։

88․ Յեթե ձեռնարկությունն սկսում է գյուտի իրագործումը՝ նախքան նրա օգտակարության սահմանումը ճյուղային մարմնի կողմից, ապա նա վարձատրում է գյուտարարին, համաձայն կատարելագործումների պարգևատրման կանոնների (հոդ․ 90)։

89․ Տեխնիքական կատարելագործման համար պարգևատրում է այն ձեռնարկությունը, վորն օգտագործում է տվյալ կատարելագործումը։ Իսկ յեթե այն օգտագործում են տվյալ ճյուղի մի քանի ձեռնարկությունները, ապա պրեմիան սահմանվում ու վորոշվում

է ճյուղային գյուտարարական մարմնի կողմից, հաշվարկելով արդեն տրված գումարները:

90. Վարձատրման չափը սահմանվում է ԱՊԽ-ին կից գյուտարարական կոմիտեի հրահանգով:

Հրահանգում պետք է նախատեսել վարձատրման զանազան դրույքներ— ա) նոր գյուտերի համար, բ) այլ կատարելագործումների համար:

91. Վարձատրման չափին ու կարգին վերաբերող բողոքները քննելու համար համապատասխան ժողկոմատին կից կազմվում է հանձնաժողով, բաղկացած տվյալ ժողկոմատի, պրոֆմիության ու Բանգյուղտեսչության ներկայացուցիչներից, վերջինիս ներկայացուցչի նախագահությամբ:

Ծանոթություն.— Ժողովրդական կոմիսարիատը ՀԱՄԿԽ-ի և ԲԳՏ ժողկոմատի հետ համաձայնության գալով (իսկ դաշնակից հանրապետությունների ժողկոմատները՝ հանրապետական պրոֆխորհրդի և հանրապետական բանգյուղտեսչության հետ) ժողկոմատներին կից հանձնաժողովների փոխարեն բողոքները քննության առնելու համար կարող է ճյուղային միավորություններին կից հանձնաժողովներ կազմակերպել: Այս հանձնաժողովների մեջ մտնում են միավորության, պրոֆմիության և Բանգյուղտեսչության ներկայացուցիչները, վերջինիս նախագահությամբ:

92. Եթե գյուտը կամ կատարելագործումը կատարված է մի քանի հոգու միջոցով, ապա գյուտի օգտագործման համար տրվող վարձատրությունը նրանց համաձայնությամբ բաժանվում է բոլորի վրա: Համաձայնություն չկայանալու դեպքում հարցը նրանց



խնդրանքով լուծվում է դատարանի կամ հասարակական կազմակերպությունների միջոցով:

93. Գյուտի կամ կատարելագործման համար ստացվող վարձատրությունը բոլոր տեսակետներից հավասարեցվում է աշխատավարձին, անկախ նրանից՝ տվյալ անձնավորությունը վարձու աշխատանք կատարում է, թե՞ ոչ:

94. Գյուտի կամ կատարելագործման վարձատրության յեկամտային հարկը հաշվարկելիս, տարեկան մինչև 6000 ռուբլու հասնող վարձատրությունը հարկման չի յենթարկվում: Եթե վարձատրությունը 6000 ռուբլուց ավելի յե, ապա նրանից հարկ է վերցվում տարեկան 6000 ռ. դուրս գալուց հետո:

95. Ոգտակար գյուտերով աչքի ընկած գյուտարարները գիտական աշխատողների հետ համահավասար բնակարանային արտոնություններ են վայելում:

Ձեռնարկություններում ու հիմնարկություններում աշխատող և ոգտակար գյուտերով աչքի ընկած գյուտարարները, յեթե նրանք բնակարան չունեն կամ ապրում են բնակարանային աննպաստ պայմաններում, իրավունք ունենին առաջին հերթին բնակարան ստանալ տվյալ ձեռնարկության կամ հիմնարկության բնակարանային ֆոնդից:

Արդյունաբերական կենտրոններում տեղական խորհուրդները գյուտարարների համար վորոշ բնակարանային տարածություն պետք է վերցնեն:

96. Բարձրագույն և միջին տեխնիքական ուսհիմնարկներում չի կարելի մերժել ընդունելու այն բանվոր գյուտարարներին, վորոնք գոհացնում են ընդունման պայմանները:

Վոչ-բանվոր գյուտարարները տվյալ ուսհիմնարկներում ընդունվում են արդյունաբերական բանվորների համահավասար:

97. Այլ հավասար պայմանների հետ միասին, գյուտարարները համապատասխան գիտա-հետազոտական և փորձնական հիմնարկություններում ու ձեռնարկություններում գիտական աշխատողների պաշտոններ գրավելու գերազանց իրավունք ունեն (ինստիտուտներում, լաբորատորիաներում, փորձնական ցեխերում ու գործարաններում և այլն):

Այս հիմնարկություններում ու ձեռնարկություններում գիտական աշխատողների վորոշ քանակությամբ տեղեր պետք է վերցնել գյուտարարների համար:

98. Ճյուղային գյուտարարական մարմինները գյուտարարների համամիութենական ընկերության հետ համաձայնության գալով, իբրև լավ գյուտարար աչքի ընկած գյուտարար աշխատողների ընտրությունը պետք է կատարեն, գյուտարարության գծով նրանց ոգտագործելու համար գիտա-հետազոտական ինստիտուտներում, լաբորատորիաներում, կոնստրուկտորական բյուրոներում, փորձնական գործարաններում ու ցեխերում և այլն:

Նրանք աշխատում են ճյուղային մարմնի առաջադրած պլանով և համապատասխան վարձատրություն են ստանում:

99. Արտադրության ուսումնասիրության և վորակավորման բարձրացման համար կատարվող արտասահմանյան և վոչ արտասահմանյան գործուղումների տարեկան պլաններում գյուտարարների համար վորոշ քանակությամբ տեղեր պետք է նախատեսել:

Գործուղում ստացող գյուտարարների ընտրությու-



նը կատարում են ճյուղային գյուտարարական մարմինները, համապատասխան կազմակերպությունների հետ համաձայնության գալով:

100. Այն գյուտարարները, վորոնք գյուտարարությամբ են զբաղվում միաժամանակ կատարելով իրենց հիմնական վարձու աշխատանքը, իրավունք ունեն յերկշաբաթյա լրացուցիչ արձակուրդ ստանալ:

101. Աշխատունակությունը կորցրած գյուտարարների համար, համապատասխան հասարակական կազմակերպությունների և գյուտարարական մարմինների միջնորդությամբ, սահմանվում է անհատական թոշակ:

102. Ձեռնարկություններում և հիմնարկություններում աշխատող գյուտարարները, այլ հավասար պայմանների դեպքում, ուրիշների նկատմամբ, առաջին հերթին սանատորիա, կուրորտ և հանգստյան տուն ուղարկվելու իրավունք են վայելում:

103. Սոցիալական ապահովության վոչ-յենթակա գյուտարարները և նրանց ընտանիքները ապահովագրված բանվորների և նրանց ընտանիքների հետ հավասար պայմաններով բժշկական ոգնության բոլոր տեսակներից ոգտվելու իրավունք ունեն:

104. Յեթե բանվոր գյուտարարների յերեխաները գոհացնում են դպրոցների ընդունելության պայմանները, ապա նրանց մերժել չի կարելի:

Վոչ-բանվոր գյուտարարների յերեխաները դպրոց են ընդունվում և ուղարկվում են մանկապարտեզների, գաղութների և նման հիմնարկների ձրի տեղերը բանվորների յերեխաների հետ հավասար պայմաններով:

Մահացած գյուտարարների յերեխաները մանկապարտեզների, գաղութների և նման հիմնարկների ձրի տեղերն են ուղարկվում առաջին հերթին:

105 *Սույն բաժնում մատնանշված իրավունքներից (հոդ. հոդ. 93—104) օգտվում են հեղինակի վկայական ստացած այն աշխատավոր գյուտարարները, վորոնց գյուտերը փորձարկումից հետո օգտակար են ճանաչված ԽՍՀՄ-ի ժողովրդական տնտեսության համար։*

*Տեխնիկական կատարելագործումներ առաջարկող անձնավորություններից նրանք, վորոնց առաջարկները խոշոր նշանակություն ունեն, արտոնություններ վայելում են գյուտարարների հետ համահավասար. մնացածների նկատմամբ՝ արտոնություններ տալու պայմանները ու ծավալը նախատեսվում է ԱՊԽ-ին կից գյուտարարական կոմիտեյի հրահանգով։*

93-*րդ և* 94-*րդ հոդվածներում մատնանշված արտոնություններից օգտվում են բոլոր այն աշխատավորները, վորոնք գյուտի կամ կատարելագործման համար վարձատրություն են ստացել։*

*Արտոնությունները տրվում են համապատասխան գյուտարարական մարմիններից ստացված վկայականների հիման վրա։*

106. *Գյուտարարի կամ տեխնիքական կատարելագործման առաջարկ ներկայացրած անձնավորության մահվան դեպքում վարձատրության իրավունքը փոխանցվում է նրանց ժառանգներին։* 93-*րդ և* 94-*րդ հոդվածներում մատնանշված արտոնություններից բացի, մնացածներից օգտվելու իրավունքը ժառանգներին չի փոխանցվում։*

ԽՍՀՄ ԿԳԿ-ի նախագահ՝ Մ. ԿԱԼԻՆԻՆ

ԽՍՀՄ ԺԿԽ-ի նախագահ՝ Վ. ՄՈԼՈՏՈՎ
(ՍԿՐՅԱԲԻՆ)

ԽՍՀՄ ԿԳԿ-ի քարտուղար՝ Ա. ՑԵՆՈՒԿԻՁԵ



# ՎՈՐՈՇՈՒՄ № 189

Աշխատանքի յեվ պաշտպանության խորհրդի
(1931 թ. մայիսի 12)

## ԳՅՈՒՏԵՐԻ ՊԱՏԵՆՏՆԵՐԻ ԳՈՐԾԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՈՒՐՔԵՐԻ ՄԱՍԻՆ

*Գյուտերի և կատարելագործումների* 1931 *թ. հունվարի* 9-*ի կանոնադրության (ԽՍՀՄ Օրենքների ժողովածու* 1931 *թ.* № 21, *հոդ.* 18) 67-*րդ հոդվածի հիման վրա Աշխատանքի և պաշտպանության խորհուրդը վորոշում է.*

1. *Գյուտի պատենտ տալու յուրաքանչյուր հայտարարությունից՝ այն ներկայացնելիս՝ գանձվում է միանվագ հայտարքային տուրք* 50 *ռ. չափով։*

2. *Սկզբնական հայտարքը մի քանի առանձին հայտարքների բաժանելու դեպքում, նրանցից յուրաքանչյուրից հայտարքային տուրք է գանձվում։ Ըստ վորում սկզբնական հայտարքի համար մուծված տուրքը հաշվվում է հայտարքային տուրքի ընդհանուր գումարում։*

3. *Մուծված հայտարքային տուրքը չի վերադարձվում թե պատենտը տալիս, թե այն մերժելիս և Դե մնացած բոլոր դեպքերում, բացի այն դեպքից, յերբ գյուտը գաղտնի յե ճանաչված (հոդ.* 10)։

4. *ԱՊԽ-ին կից Գյուտարարական կոմիտեյի նորությունների բյուրոյի վորոշումները բողոքարկելու հա-*

Այդ բողոքների խորհրդին ներկայացվող բողոքներից տուրք է գանձվում 30 ռ. չափով:

Տուրքի վճարման ենթակա չեն այն բողոքները, որ ներկայացնում են պատենտ տալու դեմ բողոքողները:

5. Գյուտի պատենտ տալու մասին նորույթյունների բյուրոյի որոշման հրապարակման օրից սկսած պատենտատերերից գանձվում է տարեկան պատենտահարկ հետեվյալ չափով—առաջին, երկրորդ և երրորդ տարիները՝ տարեկան 50 ռ., չորրորդից մինչեվ վեցերորդ տարին ներառյալ՝ 25-ական ռուբլի ավելի քան նախորդ տարին. յոթերորդ տարվանից սկսած յուրաքանչյուր տարին 50-ական ռուբլի, քան նախորդ տարին:

Ծանոթություն.— Լրացուցիչ պատենտներից տուրք է գանձվում նույն կարգով, ինչ ինքնուրույն պատենտներից:

6. Պատենտահարկը վճարվում է նախ քան յուրաքանչյուր հարկային տարվա սկիզբը, 2 ամսվա ընթացքում:

7. Պատենտահարկի մուծման ժամկետը երկարացնելիս պատենտատերերից գանձվում է պենիա այն չափով, որպիսին սահմանված է հարկերի թերագանձումների համար:

8. Գյուտի պատենտի իրավունքը փոխանցելու և լիցենզիաներ տալու մասին գյուտերի մատյանում նշում կատարելու յուրաքանչյուր դեպքի համար տուրք է գանձվում հետեվյալ կերպ.

ա) պատենտի իրավունքների փոխանցման վերաբերյալ նշումից՝ 60 ռ.:



բ) փոխանցված լիցենզիայի վերաբերյալ նշումից 30 ռ.:

9. Հանրայնացված սեկտորի ձեռնարկությունների և պատենտների նկատմամբ, որոնք փոխանցվում են հանրայնացված սեկտորի ձեռնարկություններին և կազմակերպություններին, պատենտահարկի գանձումը դադարեցվում է այն տարվանից, երբ տեղի յե ունեցել փոխանցումը. ըստ որում, մուծված հարկը չի վերադարձվում:

10. Գաղտնի ճանաչված գյուտերի գործով տուրք չի գանձվում և մուծված տուրքն էլ վերադարձվում է: Յեթե գյուտի գաղտնի լինելը վերացվի, ապա հայտարարքային տուրք ու պատենտահարկ է գանձվում սկսած այն տարվանից, յերբ գաղտնի լինելը վերացվում է: Պատենտահարկի չափի տեսակետից այդ տարին պատենտի ուժի մեջ լինելու առաջին տարին է համարվում:

11. ԱՊԽ-ին կից Գյուտարարական Կոմիտեն կարող է առանձին դեպքերում հատուկ որոշմամբ աշխատավոր գյուտարարներին և նրանց ժառանգներին ազատել հայտարարքային տուրքից ու պատենտահարկից, ինչպես նաև յերկարացնել պատենտահարկի մուծման ժամկետները:

12. Արտասահմանում ապրող անձինք ներկա որոշման մեջ մատնանշված տուրքերը մուծում են արտասահմանյան վալյուտայով:

13. Այն պատենտների նկատմամբ, որոնք ստացված են առաջներում գործող օրենքների հիման վրա և հեղինակի վկայականներով չեն փոխարինված, տուրքերը այսուհետեվ գանձվելու յեն համաձայն ներկա որոշման:

14. Գյուտերի գործով միասնական պետական հարկ չի գանձվում:

15. Սույն վորոշումը ուժի մեջ է մտնում գյուտերի և տեխնիկական կատարելագործումների կանոնադրության համար սահմանված ժամկետին, այն է՝ 1931 թ. մայիսի 25-ից

ԱՊԽ-ի նախագահի տեղակալ՝ Ն. ՌՈՒԴԶՈՒՏԱԿ

ԱՊԽ-ի քարտուղար՝ Ի. ՄԻՐՈՇՆԻԿՈՎ

## ՎՈՐՈՇՈՒՄ № 257

### ԽՍՀՄ ժողկոմխորհի (1931 թ. ապրիլի 4)

*ԽՍՀՄ Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը վորոշում է՝*

*Առաջարկել ԽՍՀՄ Մատակարարման Ժողովրդական Կոմիսարիատին և ԽՍՀՄ Ցենտրոսոյուզին միջոցներ ձեռք առնել, վորպեսզի ԽՍՀ Միության ժողովրդական տնտեսության համար ոգտակար ճանաչված գյուտերի առթիվ հեղինակի վկայական ստացած աշխատավոր գյուտարարները արդյունաբերական ապրանքներով մատակարարվեն արդյունաբերական բանվորների հետ համահավասար պայմաններով:*

ԽՍՀՄ ժողկոմխորհի նախ.՝ ՄՈԼՈՏՈՎ (ՍԿՐՅԱԲԻՆ)

ԽՍՀՄ ժողկոմխորհի գործերի վարիչ՝ Պ. ԿԵՐԺԵՆՑԵՎ



## ԳՅՈՒՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԴՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԿ(բ) Կ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՆ ՎՈՐՈՇՈՒՄԸ

1. *Արձանագրել, վոր գյուտարարական աշխատանքները ոպորտունիստական ինքնահոսի յեն մատնըված յեղել, տնտեսական կազմակերպությունները թերագնահատել են գյուտարարությունը, տեղի յեն ունել ձգձգումների ու վոլոկիտայի (Ժողտնտխորհ, «Արարատ» գործարան, Մեխ-գործարան, և այլն): Հաստատված և ընդունված գյուտերն իրացնելու գործում ևս յեղել է անթույլատրելի բյուրոկրատական մոտեցում, վորի հետևանքով 260 գյուտից կիրառված է միայն 15 տոկոս («Արարատ» գործարանի բանվոր Սաղաթել Դավթյանի գյուտը 1929 թ. հոկտեմբերից մինչև 1930 թ. փետրվարը ձգձգվում է Ժողտնտխորհում և գործարանում, Կարի գործարանից Վիրաբ Սարգսյանի գյուտը 1930 թ. կորչում է ԺՏԳԽ-ում): Ընդունված պատվերների պատրաստումը խայտառակ կերպով ձգձգվել է Մեխ-գործարանի կողմից (1928 թ. Հայպոլիգրաֆի պատվերը, 1929 թ. Հայպետհրատի պատվերը, 29 թ. տեքստիլի պատվերը): Ընդունված գյուտերի համար բանվորներին պարգևատրելն ընթացել է չափազանց ձգձգումներով. տնտեսական եֆեկտը ժամանակին հաշվի չի առնվել (4-րդ շրջանի 31 գյուտարարության առաջարկներից միմիայն 5-ի տնտեսական եֆեկտն են հաշվի առել ու պարգևատրել):*

*Բանվոր գյուտարարների համար, վորպես սոցիալիստական շինարարության ակտիվ մասնակիցների՝ անհրաժեշտ նպաստավոր պայմաններ ստեղծված չեն յեղել, չի ստեղծվել այնպիսի դրություն, վորը հրահրեր մասսայական գյուտարարությունը:*

2. Կուսակցական և կոմերիտական կազմակերպությունները տեղերում բոլորովին չեն զբաղվել գյուտարարության խնդրով, չեն ղեկավարել բանվորության հսկայական ձեռներեցությունն այս գործում և հակահարված չեն տվել օպորտունիստական տրամադրություններին՝ գյուտարարության գործում:

3. Պրոֆմիությունները և արտադրական խորհրդակցությունները գյուտարարության աշխատանքները չեն համարել իրենց հիմնական աշխատանքներից մեկը, ժամանակին չեն ապահովել պայքարը ձգձգումների դեմ, չեն ստեղծել նորմալ պայմաններ գյուտարար բանվորների համար, չեն կազմակերպել ու ղեկավարել գյուտարարության ու ռացիոնալիզացիայի աշխատանքները:

ՃՏՅԲ-ն ու ՃՏՍ կենտբյուրոները թույլ են մասնակցել գյուտարարությանն ու անբավարար աջակցություն են ցույց տվել գյուտարար բանվորներին, չեն ապահովել բանվորների վստահությունը հանդեպ իրենց:

4. ԲԳՏ ակտիվ կերպով չի պայքարել գյուտարարության իրացման և գյուտերի հաստատման ու քննարկման օպորտունիստական ձգձգումների դեմ:

5. Կենտկոմն արձանագրում է, որ չնայած տնտմարմինների և հասարակական կազմակերպությունների կողմից գյուտարար բանվորների ստեղծագործական նախաձեռնությունն անհրաժեշտ խրախուսանքի և աջակցության չի արժանացել, այնուամենայնիվ բանվորական մասսաները չեն լքել գյուտարարական աշխատանքները, այլ արել են նորանոր գյուտեր, և աճել է գյուտարարների թիվը (այժմ կա մոտ 300 գյուտարար



և արված է 260 գյուտ), վորը հետևանք է բանվորության իրական սոցիալիստական վոգևորության:

Վերջերս, շնորհիվ ՀԱՄԽ-ի ձեռք առած միջոցների, տեղերում կազմակերպվել են գյուտարարական և ռացիոնալացման բյուրոներ, և վորոշ բեկում է նկատվում աշխատանքներում։

Ելնելով այս բոլորից՝ Կենտկոմը վորոշում է.—

1. Առաջարկել Ժողկոմխորհին, մինչև հունիսի 15-ը կազմակերպել Գյուտարարության Կոմիտե՝ համաձայն ԽՍՀՄ ԿԳԿ «Գյուտերի և տեխնիկական կատարելագործությունների վերաբերյալ կանոնադրության», և ՀԱՄԽ-ի հետ վորոշել այն ժողովրդական կոմիսարիատները, հիմնարկ-ձեռնարկները (դրանց թվում խորհտնտեսությունները և Մ-Տ կայանները), կոոպերատիվ կենտրոններն ու տրանսպորտային ձեռնարկությունները, վորոնց կից պիտի կազմվեն գյուտարարական մարմիններ:

2. Հիմնարկ-ձեռնարկություններին, վորոնց կից կազմակերպվում են գյուտարարական մարմիններ, մշակել և հրապարակել կանոնադրություններ մինչև հունիսի 25-ը՝ այդպիսիք համաձայնեցնելով ՀԱՄԽ-ի հետ:

3. Շրջկոմներին՝ ուժեղացնել ղեկավարությունն գյուտարարական և ռացիոնալիստական աշխատանքների վրա, ծավալել մասսայական աշխատանք գյուտարարների միջև, լավագույններին ընդունել կուսակցության մեջ:

4. Առաջարկել ԲԳՏ և Գյուտարարական Կոմիտեյին՝ ուժեղացնել հսկողությունը հիմնարկ ձեռնարկների վրա՝ գյուտարարության առաջարկությունները ժամանակին կատարելու և ձգձգումների պատճառ հանդիսա-

ցողներին խիստ պատասխանատվության յենթարկել, ինչպես նաև հսկել, որ գյուտարարներին տրված արտոնությունները լրիվ կերպով կիրառվեն:

5. Հանձնարարել Ժողտնտխորհին՝ միջոցներ ձեռք առնել՝ ձեռնարկներում և գործարաններում ստեղծելու անհրաժեշտ պայմաններ՝ բանվորների գյուտերի փորձերի համար:

6. Առաջարկել տնտ-մարմիններին՝ միջոցներ ձեռք առնել կանոնավորելու գյուտարարության տնտեսական էֆֆեկտի հաշվառումը և ապահովել գյուտարարներին ժամանակին պարգևատրելու գործը, ինչպես նաև ապահովել գյուտերի փորձարկման գործը:

7. Գյուտարարներին գյուտերն ավելի լավ կատարելագործելու հնարավորություն տալու և նրանց տեխնիքապես ավելի գրագետ դարձնելու համար՝ Կուլտպրոպին ու ՀԱՄԽ-ին հանձնարարել՝ կազմակերպել հատուկ տեխնիքական գիտելիքների կուրսեր Երևանում և Լենինականում: Ուժեղացնել տեխնիքական գիտելիքներ ուսումնասիրող խմբակների աշխատանքները, ապահովել գյուտարարների կրթության գործը՝ գործածելով ԲՏՈՒՀ-եր, ԲՈՒՀ-եր, բանֆակներ և այլն:

8. Առաջարկել գյուտարարների միության խորհրդին և Գյուտարարական Կոմիտեյին՝ միջոցներ ձեռք առնել՝ բոլոր ձեռնարկություններին կից կազմակերպելու գյուտարարական բջիջներ մինչև հուլիսի 1-ը՝ ապահովելով բանվորական հսկողությունը գյուտարարական աշխատանքներում և կազմակերպելով գյուտարարության փորձի ամենալայն փոխանակում:

9. Առաջարկել ՃՏՍ-ին՝ ապահովել տեղերում ՃՏՍ-ի անմիջական մասնակցությունը գյուտարարների



ամանդակության գործին: Ձեռնարկություններին կից կազմակերպել խորհրդատու բյուրոներ և ապահովել մասնագետների սիստեմատիկ կոնսուլտացիան և մասնագիտական տեխնիկական օգնությունը գյուտարարներին: Գյուտերի գիտական փորձարկման համար օգտագործել գիտական-հետազոտական ինստիտուտները:

10. ՀԱՄԽ-ին, ՃՏՍ-ին և ԳԱՍ-ին՝ ինժեներ-տեխնիքական և գիտական աշխատողներին ավելի ուժեղ կերպով ներգրավել գյուտարարության և ռացիոնալիզացիայի աշխատանքներին:

11. Առաջարկել Պետհրատին՝ ՀԱՄԽ-ի հետ հրատարակել տեխնիքական մասնագիտական գրականության արժեքավոր գյուտերի նկարագիրը, մասսայականացնել ԽՍՀՄ կենտգործկոմի «Գյուտերի և տեխնիքական կատարելագործությունների վերաբերյալ կանոնադրություն»-ը:

12. Առաջարկել ՀԱՄԽ-ին՝ ապահովել տեղերում բոլոր պրոֆկազմակերպությունների անմիջական մասնակցությունն ու ղեկավարությունը գյուտարարության աշխատանքներին: Գյուտարարության առաջարկների ձգձգումների դեպքում, հավասար չափով պատասխանատու դարձնել և պրոֆկազմակերպություններին: Գյուտարարական, ռացիոնալիզատորական աշխատանքները դարձնել արտադրական խորհրդակցությունների առանցքը:

13. Ռացիոնալացման բյուրոների աշխատանքներն ուժեղացնելու համար առաջարկել ՀԱՄԽ-ին տեղերում կազմակերպել Ռաց- բջիջներ՝ ապահովելով արտադրական խորհրդակցությունների անմիջական մասնակցությունը ռացիոնալացման աշխատանքներին: Միաժամանակ առաջարկել բոլոր հիմնարկ-ձեռնարկ-

ներին, վորոնք չունեն Ռաց բյուրոներ՝ կազմակերպել այդպիսիները մինչև հուլիսի 1-ը։

14. Առաջարկել գյուտարարության կոմիտեյին՝ ապահովել ռաց—բյուրոների պլանային աշխատանքները՝ ունենալով վորակյալ աշխատակիցներ, միաժամանակ միջոցներ ձեռք առնել՝ ապահովելու ռաց-բյուրոների, գյուտարարական բյուրոների և արտադրական խորհրդակցությունների կոնտակտ աշխատանքները։

15. Առաջարկել ԲԳՏ-ին՝ մեկ ամսվա ընթացքում ստուգել խոշոր ձեռնարկությունների և ժողկոմատների աշխատանքները՝ պարզելու ռաց-բյուրոների և գյուտարարության բյուրոների աշխատանքների դրությունը և այս վորոշման կենսագործումը։

16. Լենինականի և Յերեվանի քաղկոմների բյուրոյի նիստում հունիս ամսում քննության առնել գյուտարարության և ռացիոնալիզացիայի դրությունը իրենց մոտ և ձեռք առնել վճռական միջոցներ՝ հետագա աշխատանքները ծավալելու համար։

17. Բոլոր արդյունաբերական հիմնարկային բջիջներում քննության առնել այս վորոշումը, ստուգել գյուտարարության և ռացիոնալիզատորական աշխատանքների դրությունն իրենց մոտ և ապահովել կուսբջիջների ոպերատիվ, ամենօրյա ղեկավարությունն այդ աշխատանքներում։

18. Մամուլում ավելի լայն չափով լուսաբանել գյուտարարության աշխատանքները, մասսայականացնել գյուտերը և գյուտարարներին։

19. ԱՄՍ-ին՝ ապահովել այս վորոշման մասսայականացումը և նոյեմբերին անցկացնել ստուգատես գյուտարարության և ռացիոնալիզատորական աշխատանքների մասին և զեկուցել Քարտուղարությանը։



# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

## ԳՅՈՒՏԱՐԱՐՆԵՐԻ ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

### I. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Ընկերության նպատակն է—ամեն կերպ աջակցել սոցիալիստական շինարարությանը և արդյունաբերության ու վողջ ժողովրդական տնտեսության վերակառուցմանը, դնելով այն ավելի բարձր տեխնիկական հիմքերի վրա, արագացնել ինդուստրացման տեմպերը և ուժեղացնել յերկրի տեխնիկական կարողությունն ու պաշտպանունակությունը։

2. Այս նպատակն իրագործելու համար անհրաժեշտ է՝

ա) ամեն կերպ ոժանդակել բանվորական գյուտարարությանը, հասարակայնության ուշադրությունը մոբիլիզացիայի յենթարկել այս հարցերի շուրջը, զարգացնել գյուտարարների հասարակական ինքնագործունեությունը և բարձրացնել նրանց գիտական-տեխնիկական վորակավորումը, փորձի փոխանակություն կազմակերպել և բարելավել գյուտարարության ոժանդակող ու գյուտերն իրացնող մարմինների աշխատանքը.

բ) համախմբել բոլոր խորհրդային գյուտարարներին և կատարելագործումներ կատարող բանվորներին,

ծառայողներին, ինժեներա-տեխնիկական աշխատավորներին և այլն.

գ) Նպաստել արդյունաբերության և վողջ ժողովրդական տնտեսության սոցիալիստական ռացիոնալացման զարգացմանը, աջակցել յերկրի պաշտպանունակության ամրացման գործին՝ բոլոր իրոք ոգտակար գյուտերի, կատարելագործումների և արտադրության տեխնիկական բարելավումների շուտափույթ և լայն իրագործման միջոցով, պայքարել այն ձգձգումների, անշարժության և անպատասխանատու վերաբերմունքի դեմ, վորպիսիք կհանդիպեն բանվորական գյուտերի ու առաջարկությունների իրացման ասպարեզում.

դ) լայնորեն մասսայականացնել կառավարության, կուսակցության և պրոֆմիութենական մարմինների այն բոլոր վորոշումները, վորոնք վերաբերվում են ընդհանրապես գյուտարարության և մասնավորապես գյուտարարներին տրվող արտոնություններին, գյուտարարության զարգացման պրոպականդայի վարմանը, ստուգատեսների, կոնկուրսների և այլն ձեռնարկումների կազմակերպմանը:

յե) համատեղ աշխատանք կազմակերպել գյուտարարության հարցերի շուրջը (Պաշը-Ավիաքիմ, տեխմաս, գիտական-տեխնիկական ընկերություններ և այլն):

## ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

3. Գործող որենքների և կուսակցական, միութենական ու տնտեսական մարմինների վորոշումների և դիրեկտիվների հիման վրա ընկերությունը պրոֆմիությունների ղեկավարությամբ կատարում է հետեվյալ աշխատանքը.



ա) ընկերության գործունեության վերաբերող հարցերի շուրջը կապ է հաստատում պետական հիմնարկությունների և հասարակական ու այլ կազմակերպությունների հետ.

բ) հասարակական վերահսկողության կարգով մասնակցում է այն պայքարին, վորպիսին տարվում է գյուտերի և կատարելագործումների պատենտավորման ու իրացման գործում հանդիպող բյուրոկրատիզմի, սաբոտաժի, ձգձգումների և այլ աննորմալ յերեվույթների դեմ.

գ) ոժանդակում է ձեռնարկություններին, տրեստներին և միավորություններին գյուտարարության զարգացմանը նպաստող փորձառական արհեստանոցներ, եքսպերիմենտալ գործարաններ, փորձակայաններ, հատուկ դպրոցներ, կուրսեր ու ինստիտուտներ կազմակերպելու գործում և հասարակական վերահսկողություն է սահմանում նրանց աշխատանքի վրա.

դ) սիստեմատիկ հաշվառման է յենթարկում գյուտարարական ուժերը ԽՍՀՄ-ում ու նրանց նվաճումները, ոժանդակում է մոբիլիզացիայի յենթարկելու գյուտարարական կադրերին՝ հատուկ առաջադրությունների, կոնկուրսների, ցուցահանդեսների, մամուլի և այլ ձեռնարկումներով մշակելու համար ամենից ավելի ակտուալ տեխնիկական պրոբլեմները.

յե) ձեռնարկություններում կազմակերպում է գյուտարարական բջիջներ և ոժանդակում է նրանց աշխատանքի զարգացմանը.

զ) աջակցություն է ցույց տալիս գյուտարարական և սոցիալիստական աշխատանքի կազմակերպմանը հարվածային բրիգադներում, ռացիոնալացատորական խմբերում և արտադրական կոլեկտիվներում: Աջակ-

ցություն է ցույց տալիս գյուղատնտեսական լավագույն նվաճումների համար նրանց միջև սոցիալիստական մրցություն կազմակերպելու գործին.

է) կազմակերպում է գյուղատնտեսական համագումարներ և կոնֆերանսներ, մասնակցում է այլ հասարակական կազմակերպությունների կողմից հրավիրվող համագումարներին և կոնֆերանսներին.

ը) խոշոր կենտրոններում կազմակերպում է գյուտարարների տներ կամ գյուտարարական ակումբներ, իսկ առանձին ձեռնարկություններում՝ գյուտարարական անկյուններ և այլն.

թ) կազմակերպում է կամ մասնակցում է կազմակերպելու գյուտարարների և կատարելագործողների համար գիտական-տեխնիկական և իրավական կոնսուլտացիաներ, կուրսեր, դասախոսություններ, գրադարաններ, ինքնազարգացման խմբակներ, տեխնիկական խորհրդակցություններ և այլն.

ժ) ոժանդակում է գյուտերը արտադրության մեջ ըստ ամենայնի ռացիոնալ ձևով ոգտագործելու խնդրում և ոգնություն է ցույց տալիս գործազուրկ գյուտարարներին արտադրության մեջ տեղավորելու ըստ նրանց վորակավորման.

ժա) ոժանդակում է, վորպեսզի յերիտասարդ գյուտարարները ճիշտ պատրաստություն ստանան արտադրության մեջ և ուսումնական հիմնարկներում, ինչպես նաև գյուտարարները և կատարելագործողները հեշտությամբ ընդունվեն միջին ու բարձր տեխնիկական դպրոցները և գիտական-հետազոտական ինստիտուտները.

ժբ) աջակցություն է ցույց տալիս իր անդամներին՝ իրավապես և տեխնիկապես ձևակերպելով նրանց



իրավունքները գյուտերի ու կատարելագործումների պատենտավորման և իրացման ժամանակ, մասնակցություն է բերում այդ կապակցությամբ առաջացող կոնֆլիկտների լուծմանը և պրոֆմիութենական կազմակերպությունների միջոցով քրեական պատասխանատվության է յենթարկել տալիս ձգձգողներին.

ժգ) մասնակցում է գյուտերի ոգտակարությունը վորոշելու աշխատանքին, վորպիսին կատարում են ձեռնարկությունների, տրեստների և միավորությունների գյուտարարական բյուրոները. մասնակցում է մշակելու տիպային պայմանագրերը և գյուտերի վարձատրման ու պարգևատրման վերաբերյալ հրահանգներն ու ցուցմունքները, լուծելու գյուտարարների և տնտեսական մարմինների միջև ծագող կոնֆլիկտները.

ժդ) միջոցներ է ձեռք առնում առողջացնելու և բարելավելու գյուտարարական գործունեության նյութական, իրավական ու կենցաղային պայմանները, հատկապես գյուտարարական փոխօգնության գծով:

4. Ընկերությունը վայելում է իրավաբանական անձի իրավունքներ և վորպես այդպիսին կարող է՝

ա) ձեռք բերել և ունենալ իր նպատակների և խնդիրների իրագործման համար անհրաժեշտ գույքը, կնքել ընկերության նպատակներին և խնդիրներին անմիջապես համապատասխանող վոչ-առևտրական տիպի պայմանագրեր, հանդես գալ դատարանում վորպես հայցվոր և պահանջատեր.

բ) ընկերության նպատակներին և խնդիրներին վերաբերող հարցերով ներկայացուցիչներ տալ բոլոր հիմնարկություններում.

դ) հրատարակել և տարածել գյուտարարական գործին, գյուտարարների կյանքին և նրանց կազմակերպություններին վերաբերող պարբերական և այլ հրատարակություններ.

ե) ունենալ կենտրոնական ու տեղական գրադարաններ և իր անդամների համար կազմակերպել կուլտուրական այլ հիմնարկներ.

զ) ունենալ սեփական կնիք և շտամպ.

է) ունենալ անդամատոմսեր:

5. Իր բոլոր պարտավորությունների համար ընկերությունը պատասխանատու յե իր միջոցներով: Գյուտերի իրացման համար ընկերությունը վոչ մի առևտրական աշխատանք չի կատարում:

## II. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԸ

6. Ընկերությունը հիմնականում կազմվում է կամավոր հիմունքներով անդամագրվող բանվոր գյուտարարներից և կատարելագործողներից. ընդունում է նաև գյուտարարության գործին ակտիվ աջակցություն ցույց տվող բանվորներին, ծառայողներին և ճարտարագետ-տեխնիկական աշխատավորներին:

7. Ընկերության անդամ կարող են լինել միայն պրոֆմիության անդամները (և նրանց հավասարեցրած զինվորական ծառայողները և այլն), ինչպես նաև կոլտնտեսականները, ըստ վորում ընդունելությունը լինում է ինչպես անհատաբար, այնպես էլ կոլեկտիվ կերպով—ամբողջ բջիջներով և խմբերով:

8. Ընկերության անդամ լինել չեն կարող այն անձինք, վորոնք դատական կարգով իրավազրկված են,



ինչպես նաև նրանք, վորոնք անցյալում իրենց հակահասարակական վարքով աչքի յեն ընկել գյուտարարական փրոնտում:

## III. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՀԵՌԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

9. Ընկերության անդամների ընդունելությունը կատարվում է, իբրև կանոն, տեղական ստորին կազմակերպությունների միջոցով, բջջի կամ կոլեկտիվի անդամների ընդհանուր ժողովում:

10. Նրանք, վորոնք ցանկանում են անդամագրվել ընկերությանը, դիմում են տալիս բջջին՝ կցելով իրենց մասին անհրաժեշտ տեղեկությունները:

11. Տվյալ անձնավորության չընդունվելու կամ հեռացման դեպքում նա կարող է բողոքարկել համապատասխան վերադաս կազմակերպության առաջ:

12. Ընկերության անդամի պայմանական, ժամանակավոր կամ, իբրև տույժի վերջին միջոց, լիակատար հեռացումը կարող է տեղի ունենալ համապատասխան տեղական կազմակերպության անդամների ընդհանուր ժողովի վորոշմամբ հետևյալ դեպքերում.

ա) յերբ ընկերության անդամը կատարել է հասարակականորեն վարկաբեկիչ քայլեր, վորպիսիք դցում են ընկերության հեղինակությունը կամ դժվարացնում են նրա նպատակների և իրավունքների իրագործումը.

բ) յերբ ընկերության անդամը բազմիցս խախտում է կանոնադրությունն ու հասարակական դիսցիպլինան և առանձնապես հակազդում է ընկերության կենտրոնական ու տեղական մարմինների վորոշումների կենսագործման վրա:

## IV. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

13. Ընկերության յուրաքանչյուր անդամն իրավունք ունի ընտրելու և ընտրվելու ընկերության գծով բոլոր պաշտոնների համար և վայելում է վճռական ձայնի իրավունք ընդհանուր ժողովներում:

14. Ընկերության բոլոր անդամները վայելում են ընկերության կողմից աջակցություն ու պաշտպանություն ստանալու իրավունք իրենց գյուտերի և կատարելագործումների պատենտավորման և իրացման, ինչպես նաև իրենց ուսումնական-տեխնիկական վորակավորումը բարձրացնելու և իրենց գործունեության իրավական և կենցաղային պայմանները բարելավելու գործում:

15. Ընկերության բոլոր անդամները պարտավորվում են յենթարկվել ընկերության կանոնադրությանը, նրա համագումարների և նրա այլ մարմինների վորոշումներին, միաժամանակ ամեն կերպ աջակցել ընկերության գործունեության զարգացմանը և նրա նպատակների ու խնդիրների հաջող կենսագործմանը:

16. Իր ամենօրյա աշխատանքի ընթացքում ընկերության յուրաքանչյուր անդամ պարտավոր է օգնել ռացիոնալիզատորական շինարարության գործին՝ ԽՍՀՄ ինդուստրացման և պաշտպանունակության ամրացման գծով՝ վոչ միայն իր անձնական տեխնիկական ստեղծագործությամբ, այլ և ամենաակտիվ մասնակցություն բերելով սոցմրցման ու հարվածայնության զարգացման գործին, արտադրական խորհրդակցությունների և արհեստակցական կամ հասարակական այն կազմակերպությունների աշխատանքներին, վորոնք առաջարկել են արդյունաբերության ռացիոնալացման, տեխնիկական առաջադիմության զարգացման, յերկրի պաշտպանունակության ուժեղացման և խորհրդային գյուտարարության գործի բարելավման խնդիրները:



17. Ընկերության յուրաքանչյուր անդամի ամենագլխավոր ու հիմնական պարտականություններից մեկն է հանդիսանում՝ պայքարել մանր-բուրժուական, ինդիվիդուալիստական մտածողությունների դեմ, պատրաստել իսկական հասարակական գործիչ գյուտարարներ՝ վերցնելով այդպիսիք բանվոր գյուտարարներից և հատկապես յերիտասարդներից:

18. Իրենց աշխատանքի արդյունքները բարելավելու և նրանց հասարակական օգտակարությունն ավելացնելու նպատակով, ընկերության յուրաքանչյուր անդամը պետք է անշեղորեն ձգտի բարձրացնելու իր գիտական ու տեխնիկական գիտելիքները՝ ինքնազարգացման միջոցով և դեպի նույն նպատակն առաջնորդող այլ ճանապարհներով, ինչպես նաև օգնել իր հասարակական և գյուտարարական միջավայրի աշխատակիցների գիտական-տեխնիկական վորակավորման բարձրացմանը:

## V. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՅՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ ՅԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

19. Գյուտարարների համամիութենական ընկերության գործունեությունը տարածվում է ԽՍՀՄ-ի ամբողջ տերիտորիայի վրա և գտնվում է ՀԱՄԿԽ-ի անմիջական վերահսկողության ներքո:

20. Խորհրդային գյուտարարների համամիութենա-

կան ընկերությունը կազմվում է տերիտորյալ հիմունքներով:

21. Ընկերության մարմիններն են՝

ա) կենտրոնական համագումարները և կոնֆերենցիաները, կենտրոնական խորհուրդը և նրա նախագահությունը.

բ) Ընկերության հանրապետական, յերկրային և մարզային բաժանմունքները և նրանց կոնֆերենցիաները և վերջիններիս նախագահությունները.

գ) արդյունաբերական ավանների ու շրջանների, ձեռնարկությունների, հանքերի, յերկաթուղային կայարանների, խորհտնտեսությունների, կոլտնտեսությունների, մեքենա-տրակտորային կայանների և այլ միավորների գյուտարարական բջիջները:

## VI. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

22. Գյուտարարների համամիութենական ընկերության բարձրագույն ղեկավար մարմինն է հանդիսանում գյուտարարների համամիութենական համագումարը, որը հրավիրվում է վոչ պակաս, քան յերկու տարին մեկ անգամ.

23. Հերթական համագումարների միջև ընկած ժամանակաշրջանում ընկերության գործունեությունը ղեկավարելու համար համագումարն ընտրում է ընկերության Կենտրոնական Խորհուրդ: Ընկերության Կենտրոնական Խորհրդի աշխատանքն ընթանում է ՀԱՄԿԽ-ի անմիջական ղեկավարությամբ՝ իսկ նրա տեղական մարմինների աշխատանքները՝ պրոֆմիությունների ղեկավարությամբ:



24. Կենտրոնական Խորհուրդը հանդիսանում է իբրև գործադիր մարմին ընկերության համագումարների ու կոնֆերենցիաների նկատմամբ և իբրև ղեկավար մարմին՝ նրա բոլոր հիմնարկությունների և տեղական մարմինների նկատմամբ: Կենտրոնական Խորհրդի ղեկավարմանը առանձնապես ենթակա յեն քննել և հաստատել՝

ա) ամբողջ ընկերության տարեկան նախահաշիվը.

բ) ընկերության կենտրոնական հիմնարկությունների, ինչպես նաև Կենտրոնական Խորհրդին անմիջապես ենթակա տեղական մարմինների հաշվետվությունները, նախահաշիվները, կառուցվածքը և հաստիքները.

գ) նույն հիմնարկությունների և մարմինների, ինչպես նաև ընկերության անդամների տեղական կոնֆերանցիաների և պատգամավորական ժողովների սկզբունքային. բնույթ կրող հարցերի առթիվ ընդունած վորոշումները:

25. Կենտրոնական Խորհուրդն իրավունք ունի՝

ա) փոխել, դադարեցնել կամ վերանայման դնել ստորադաս մարմինների կենտրոնական հիմնարկությունների բոլոր վորոշումներն ու կարգադրությունները այն դեպքում, յերբ այդ վորոշումներն ու կարգադրությունները հակասում են սույն կանոնադրությանը և ընկերության համագումարների ու կոնֆերենցիաների կամ Կենտրոնական Խորհրդի վորոշումներին ու դիրեկտիվներին.

բ) փոխել ստորադաս մարմինների առանձին պաշտոնատար անձանց, ինչպես նաև ցրել այն մարմիններն ու կազմակերպությունները, վորոնց գործունեությունը անհամատեղելի կլինի վողջ ընկերության նը-

պատակների ու խնդիրների հետ կամ կհարվածի նրա կենսունակությունն ու հեղինակությունը:

26. Ընկերության ընթացիկ ղեկավար աշխատանքը վարելու համար կենտրոնական խորհուրդն ընտրում է նախագահություն:

27. Կենտրոնական Խորհուրդն իր գործունեության համար պատասխանատու յե համամիութենական համագումարի առաջ, իսկ նախագահությունը՝ Կենտրոնական Խորհրդի առաջ:

28. Նպատակ ունենալով ապահովել պրոֆկազմակերպությունների ամենօրյա ու մշտական ղեկավարությունը և իրագործել նրանց ամենօրյա վերահսկողությունն ընկերության գործունեության հանդեպ՝ գյուտարարների համամիութենական համագումարն ընկերության Կենտրոնական Խորհրդի նախագահության կազմի մեջ մտցնում է յերկու ներկայացուցիչ ՀԱՄԿԽ-ից, իսկ ստորին կազմակերպությունների մեջ մտցվում են տեղական պրոֆխորհուրդների մեկական ներկայացուցիչները, ձեռնարկություններում՝ և հիմնարկություններում գործարանեղկոմի ներկայացուցիչը:

## VII. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏԵՂԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

29. Ընկերության տեղական մարմինները կարող են կազմակերպվել ամբողջ ԽՍՀՄ-ի տերիտորիայում, համաձայն սույն կանոնադրության 26-րդ և 27-րդ պարագրաֆների.

30. Ընկերության տեղական կազմակերպությունների հերթական կոնֆերենցիաները հրավիրվում են ամեն տարի, համապատասխան վերադաս մարմինների գիտությամբ և համաձայնությամբ:



31. Ընկերության տեղական կազմակերպությունների կոնֆերենցիաներն ընտրում են խորհուրդներ, իսկ խորհուրդներն իրենց կողմից ընտրում են նախագահություն:

32. Ընկերության ստորին բջջի կազմակերպման համար անհրաժեշտ է, որ լինի ոչ պակաս, քան 5 անդամ: Այս թվից պակաս լինելու դեպքում ստեղծվում են գյուտարարների խմբակներ և ըստ հնարավորության միանում են ամենից ավելի մոտիկ գտնվող բջջին:

33. Ընկերության տեղական բջիջները ձեռնարկություններում աշխատում են գործարկոմի և արտխորհրդակցության ղեկավարությամբ, սերտ համագործակցելով գյուտարարության իրացման և աջակցության բյուրոների և ռացիոնալացման մարմինների հետ:

## VIII. ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ՎԵՐԱՍՏՈՒԳՈՒՄ.

34. Տնտեսական – ֆինանսական օպերացիաները վերստուգելու համար համապատասխան համագումարներում, կոնֆերենցիաներում և ժողովներում ընտրվում են վերստուգիչ հանձնաժողովներ՝ բաղկացած ոչ պակաս, քան 3 անդամից ու յերկու թեկնածույից, որոնք գործում են տվյալ ստուգելի մարմնի լիազորական ամբողջ շրջանում:

35. Ընկերությունն իր գործունեության տարեկան հաշվետվությունը թողնում է ՀԱՄԿԽ-ին, ԽՍՀՄ Բանգյուղտեսչությանը և Աշխատանքի ու Պաշտպանության Խորհրդին կից գործող Գյուտարարական Կոմիտեյին, ինչպես նաև վերջիններիս պահանջով կամ սեփական

նախաձեռնությամբ էր գործունեության հաշվետվությունը ներկայացնում է նրանց:

## IX. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

36. Ընկերության միջոցները կազմվում են՝

ա) մուտքի վճարներից և անդամավճարներից.

բ) ընկերության անդամների վարձատրման ու պարգևատրման գումարների տոկոսային հատկացումներից.

գ) կամավոր վճարներից.

դ) ընկերության հրատարակություններից ու կուլտ-կրթական հիմնարկություններից ստացվող յեկամտից.

յե) ընթացիկ հաշիվների տոկոսներից.

զ) ընկերության նպատակներին ու խնդիրներին համապատասխանող այլ յեկամուտներից.

37. Մուտքի վճարները և անդամավճարները գանձվում են հետևյալ կարգով.

ա) 100 ռուբլուց վոչ ավելի մշտական ամսական աշխատավարձ ստացողներից գանձվում 50 կ., իսկ մնացածներից՝ 1 ռ.

բ) ամենամսյա անդամավճարները սահմանվում են 15–20 կ.:

38. Գյուտերի հեղինակների վարձատրման և պարգևատրման տոկոսային հատկացումները անդամներից գանձվում են միանման հիմունքներով, այսինքն՝

ա) 100-ից մինչև 500 ռ. յեղած դեպքում 2%

բ) 500-ից « 1000 ռ. 3%

գ) 1000 ռուբլուց ավելի. 5%

Ծանոթություն.— Ընկերության այն անդամները, վորոնք վճարելու հնարավորություն



չունեն, վորոշ ժամանակով ազատվում են անդամավճար և այլ հատկացումներ մուծելուց, համաձայն համապատասխան տարրին կազմակերպությունների ընդհանուր ժողովների վորոշման: 100 ռուբլուց պակաս պարգևատրումներից տոկոսներ չեն գանձվում:

## X. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՆՐԱ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԼՈՒԾԱՐՔԸ

39. Ընկերության լուծարքը կարող է կատարվել կամ ՀԱՄԿԽ-ի, կամ ԽՍՀՄ կենտրոնական կառավարական մարմնի և կամ ընկերության անդամների համամիութենական համագումարի վորոշմամբ:

40. Ընկերության լուծարքը կատարվում է հատուկ լուծարքային հանձնաժողովի միջոցով, վորպիսին ընտրվում է համամիութենական համագումարի կողմից, վոչ պակաս, քան 3 հոգու կազմով, յեթե լուծարքի վորոշումը մտցրել է համամիութենական համագումարը, կամ այդ լուծարքային հանձնաժողովը նշանակվում է ընկերության Կենտրոնական Խորհրդի կողմից, լուծար- քի մասին վորոշող մարմնի հետ միասին:

41. Լուծարքի կարգը սահմանում է այն մարմինը, վորը վորոշում է հանում ընկերության լուծարքի մասին:

42. Լուծարքը վերջացնելիս ընկերության բոլոր գործերը և գույքը հանձնվում են այն կազմակերպությանը, վորպիսին մատնանշում են կենտրոնական կառավարական մարմինները:

43. Ընկերության այս կամ այն մարմնի լուծարքի դեպքում լուծարքի յենթարկվող մարմնի բոլոր գործերը, միջոցները և գույքը հանձնվում են ընկերության վերադաս մարմնին:

# ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

## ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՅՈՒՏԱՐԱՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲՋԻՋՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՅԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՐԳԸ

### I ԲՋԻՋԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Մասսայական տեխնիկական ստեղծագործությունը զարգացնելու և օգտագործելու, ձեռնարկության տեխնիկական կարողությունն ուժեղացնելու, գյուտարարների հասարակական և տեխնիկական ինքնագործունեությունը զարգացնելու և առաջարկությունների ու գյուտերի գործնական օգտագործման ուղղությամբ պայքարն ուժեղացնելու գործի համար լավագույն պայմաններ ստեղծելու նպատակով, գործարկոմներին կից կազմակերպվում են գյուտարարական ընկերության բջիջներ, վորոնք իրենց աշխատանքը կատարում են գործարկոմին կից արտխորհրդակցության կազմակերպչի ղեկավարությամբ: Բջիջներն ընդգրկում են գյուտարարներին, կատարելագործումներ մտցնողներին և այդ գործով հետաքրքրվողներին, գյուտարարության զարգացմանն աջակցող բանվորներին, ծառայողներին և ինժեներ-տեխնիկական աշխատավորներին:

### II ԲՋԻՋԻ ԳՈՐԾՈՒՆԵՅՈՒԹՅՈՒՆԸ

2. Բջջի պրակտիկ գործունեությունն ընթանում է ձեռնարկության արտադրության տեխնիկայի կատա-



րելագործման և բարելավման ուղղությամբ: Բջիջը պետք է յերևան հանի արտադրության հետամնաց տեխնիկական մեթոդներն ու պրոցեսները, աշխատի այն փոխարինել ավելի լավ, աշխատանքի արտադրողականությունը բարձրացնող և բանվորի աշխատանքը հեշտացնող մեթոդներով: Այս նպատակով նա պետք է գիտենա իր արտադրության բնույթն ու առանձնահատկությունները, նրանում գոյություն ունեցող տեխնիկական մեթոդները, յեղանակներն ու պրոցեսները, նրանց առավելություններն ու թերությունները:

3. Ձեռնարկության տեխնիկական կարողությունն ուժեղացնող ճիշտ և տեխնիկապես հիմնավորված միջոցներ առաջարկելու համար բջիջը պարտավոր է բարձրացնել իր անդամների վորակավորումն ու տեխնիկական մակարդակը և ամենորյա շաղկապում ստեղծել իր ստեղծարար գործունեության և գիտական հետազոտական ու ռացիոնալիզատորական մարմինների, հարվածային բրիգադների ու արտխորհրդակցությունների աշխատանքի միջև:

4. Բջիջն ակտիվ մասնակցություն պետք է ունենա ձեռնարկության համար անհրաժեշտ գյուտարարական ու կատարելագործման թեմաների ու առաջադրությունների մշակման գործում:

5. Իրենց նախաձեռնությամբ և ձեռնարկության ռացիոնալիզատորական մարմինների առաջադրություններով բջիջն ստեղծում է գյուտարարների առանձին հարվածային բրիգադներ, վերացնելու համար ձեռնարկության արտադրության և բաց թողնվող արտադրանքի տեխնիկական թերությունները:

6. Բջիջն աջակցություն է ցույց տալիս ձեռնար-

կության գյուտարարական մարմիններին մշակելու, տեխնիկապես ձևավորելու և անցկացնելու օգտակար գյուտերն ու կատարելագործումները, անկախ նրանից, թե ո՞վ է առաջարկել այդպիսիք—տվյալ գյուտարարները, թե՞ այլ ձեռնարկություններում աշխատողները:

7. Նա հսկողություն և հասարակական կոնտրոլ է կազմակերպում տեղական այն մարմինների գործունեության վրա, վորոնք առնչություն ունեն տվյալ ձեռնարկության գյուտարարական գործի հետ (գյուտարարական բյուրո, գործարանի վարչություն, լաբորատորիաներ և այլն), հետեվում է, վոր ժամանակին կենսագործվեն գործարանային վարչության կողմից ընդունված օգտակար առաջարկություններն ու գյուտերը, չեֆություն է սահմանում առանձին և ըստ ամենայնի թանկարժեք գյուտերի նկատմամբ:

8. Լայն մասսայականացնում է բոլոր այն վորոշումները, վորպիսիք ընդունվում են կառավարության, կուսակցության և պրոֆմարմինների կողմից գյուտարարության և առանձնապես գյուտարարներին տրվող արտոնությունների մասին: Պրոպագանդ է մղում գյուտարարությունը զարգացնելու ուղղությամբ, կազմակերպում է ստուգատեսներ, կոնկուրսներ և այլն:

9. Աջակցություն է ցույց տալիս հարվածային բրիգադներում, ռացիոնալիզատորական խմբակներում և արտադրական կոլեկտիվներում աշխատանքը կազմակերպելու գործին: Աջակցում է նրանց միջև սոցմրցում կազմակերպել գյուտարարության խնդրում լավագույն նվաճումներ ձեռք բերելու համար:

10. Երեվան է հանում քաշքշուկի և սաբոտաժի,



գյուտարարների նկատմամբ անհոգի բյուրոկրատական վերաբերմունքի դեպքերը: Պայքարում է այդ յերեվույթների դեմ, նախաձեռնող է հանդիսանում բանվորական գյուտարարության վնասարարների և քաշքշողների նկատմամբ ցուցադրական դատեր կազմակերպելու խնդրում:

11. Այն դեպքերում, յերբ գյուտարարների կողմից տրված իդեաներն ու սկզբունքները մշակման և իրագործման ընթացքում աղավաղվում են, կամ չնայած դրական կարծիքներին, գյուտերը տապալվում են, սաբոտաժի յեն յենթարկվում, բջիջը կարող է գործարանային վարչության հետ միասին կազմակերպել եքսպերտ հանձնաժողովներ, մշակել և ձևավորել գյուտարարական էսքիզներն ու գծագրումները, ինչպես նաև գյուտերի առաջադրման ու իրագործման համար նշանակել հատուկ հսկիչ հանձնաժողովներ:

Այս ձեռնարկումների իրագործման համար բջիջը կազմակերպում է տեխնիկական և իրավական կոնսուլտացիայի կամավոր խմբակներ և գծագրական-կոնստրուկտորական խմբակներ, բաղկացած ձեռնարկությունում զբաղված բանվորներից ու տեխպերսոնալից, աշխատանքին մասնակից է դարձնում ԲՏՈՒՀ-ների և ԲՈՒՀ-երի ուսանողներին, գիտական-տեխնիկական աշխատավորներին, ուսանողական կազմակերպություններին, գիտական տեխնիկական ընկերություններին և այլն:

12. Բջիջն իրավական աջակցություն է ցույց տալիս իր անդամներին գյուտերի պատենտավորման խնդրում, մասնակցում է դրա հետ կապված կոնֆլիկտների լուծման գործին, քննություն է առնում հեղին-

կի իրավունքին վերաբերյալ վեճերը և օգնում է իր անդամներին օրինական պաշտպանություն ստանալու և խրախուսանքի խնդրում, աջակցություն է ցույց տալիս գյուտարարների և ձեռնարկության միջև հավաքական ու կոլեկտիվ պայմանագրեր կնքելու գյուտարարական աշխատանքի հետ կապված հարցերի շուրջը:

13. Հիմք ունենալով ԺՏԳԽ-ի և ՀԱՄԿԽ-ի հատուկ կանոնադրությունը, ԲՋԻՋԸ գյուտարարներին աջակցող մարմինների և պրոֆմարմինների միջոցով հատուկ միջոցների յե դիմում, վորպեսզի գյուտարարներն իրենց առաջարկությունների մշակման և իրագործման ժամանակ ազատվեն աշխատանքից, բայց պահպանեն իրենց միջին աշխատավարձն ի հաշիվ ձեռնարկության կամ այն տնտեսական միավորության, վորը շահագրգռված է տվյալ առաջարկության իրագործման համար:

14. Գործարկոմի և վերադաս միութենական կազմակերպությունների միջոցով ԲՋԻՋԸ հարց է հարուցում՝

ա) ամենից ավելի գործունյա ու օգտակար գյուտարարներին փոխադրել ըստ իրենց մասնագիտության աշխատելու եքսպերիմենտալ ցեխերում, կոնստրուկտորական բյուրոներում, իրենց ձեռնարկության գիտական-տեխնիկական մարմիններում և գիտական-հետազոտական ինստիտուտներում.

բ) գյուտարարներին առաջ քաշել մշտական աշխատանքի՝ ռացիոնալիզատորական ու գյուտարարական մարմիններում թե՛ տվյալ ձեռնարկությունում և թե դրսում.



գ) տեխնիկական փորձի փոխանակման համար գյուտարարներին գործուղել ցուցահանդեսները, եքսկուրսիաները, տեխնիկապես օրինակելի ձեռնարկությունները, գիտական-հետախուզական ինստիտուտները, ինչպես նաև արտասահման և այլն.

դ) առաջին հերթին նրանց ուղարկել տեխնիկումները և ԲՏՈՒՀ-ները տեխնիկական կրթություն ստանալու համար:

15. ԲՋԻՋԸ փորձի փոխանակում է կազմակերպում իրենց ձեռնարկության և արտադրության բնույթով նրան նմանվող այլ ձեռնարկությունների միջև:

16. Իր ներկայացուցիչների միջոցով մասնակցում է գյուտարարության ասպարեզում աշխատող ձեռնարկությունների և կազմակերպությունների գործունեությանը:

17. Ձեռնարկության գյուտարարական ուժերի, ինչպես նաև ԲՋԻՋԻ ստեղծարար գործունեության արդյունքների ու նվաճումների հաշվառում է կատարում:

## III ԲՋԻՋԻ ԿԱԶՄԸ

18. ԲՋԻՋԸ, վորը հիմնականում կազմակերպվում է կամավոր կերպով անդամագրվող գյուտարարներից և կատարելագործողներից, ընդունում է նույնպես գյուտարարությանն ակտիվ աջակցություն ցույց տըվող բանվորներին, ծառայողներին և ինժեներ-տեխնիկական աշխատավորներին: ԲՋԻՋԻՆ անդամագրվել կարող են միայն պրոֆմիության անդամները:

## IV ԲՐԻԶԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

19. Բրիզի յուրաքանչյուր անդամ վճռական ձայնի իրավունք է վայելում և կարող է ընտրվել բրիզի ղեկավար մարմիններում, գյուտարարական կոնֆերենցիաներում, ինչպես նաև կարող է գյուտարարական մարմինների և նման նպատակներ հետապնդող այլ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչ ընտրվել:

20. Բոլոր անդամները բրիզի աջակցության և իրենց շահերի պաշտպանության հավասար իրավունք են վայելում գյուտերի պատենտավորման, նրանց առաջարկությունների մշակման ու կիրառման խնդրում, ինչպես նաև գյուտարարների գիտական-տեխնիկական վորակավորման և նրանց բոլոր որինական անհատական իրավունքների պաշտպանության իմաստով:

21. Ամենորյա աշխատանքում բրիզի յուրաքանչյուր անդամը պետք է աջակցի սոցիալիստական շինարարության գործին վոչ միայն իր անհատական տեխնիկական ստեղծարար աշխատանքով, այլ և ակտիվ մասնակցելով հարվածային բրիգադների, արտխորհրդակցությունների և այլ հասարակական կազմակերպությունների աշխատանքին:

## V ԲՐԻԶԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

22. Գյուտարարների գոյություն ունեցող խմբակները վերակազմվում են և դառնում գյուտարարական բրիզներ տվյալ կանոնադրության հիման վրա, իսկ այնտեղ, վորտեղ չկան այդպիսիք, պետք է կազմակեր-



պել: Իրենց գործունեության համար բրիզները պատասխանատու յեն ձեռնարկության գործարկոմի առաջ:

Բրիզի ղեկավար մարմինն են հանդիսանում ընդհանուր ժողովները, վորոնք հրավիրվում են ամիսը վոչ պակաս, քան 3 անգամ: Ընդհանուր ժողովներն որինական են համարվում, յերբ ներկա յե լինում բրիզի անդամների յերկու յերրորդ մասը:

23. Ամբողջ աշխատանքի մշտական ղեկավարման ու կազմակերպման, ինչպես նաև ամբողջ ընթացիկ ու գործադիր աշխատանքի իրագործման համար ընդհանուր ժողովում ընտրվում է բյուրո:

24. Բրիզի բյուրոն ընտրվում է վոչ պակաս, քան մեկ տարի ժամանակով և իր գործունեության համար պատասխանատու յե բրիզի ընդհանուր ժողովի և գործարկոմի առաջ:

## VI ԲՐԻԶԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ

25. Բրիզն իր ծախսերն հոգում է ի հաշիվ այն միջոցների, վորոնք բաց են թողնվում գյուտարարության աջակցության ֆոնդից ի հաշիվ գործարկոմի և գործարանի վարչության:

26. Ձեռնարկությունը բրիզին հատկացնում է առանձին սենյակ («Գյուտարարների անկյուն», «արտադրական սենյակ») ժողովների և բրիզի մյուս բոլոր աշխատանքների կազմակերպման համար:

ՀԱՄԿԽ-ի քարտուղար՝ ՎԵՑՆԲԵՐԳ

ՀԱՄԿԽ-ին կից գյուտարարական
կազմբյուրոյի նախագահ՝ ՍԵԳԱԼ

## ԳՅՈՒՏԱՐԱՐՆԵՐԻ ՀԱՄԱՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ (1931 Թ. ՄԱՅԻՍԻ 16) ԲԱՆԱՁԵՎԸ

### (ԸՆԴՈՒՆՎԱԾ ՀԱՄԽ-ԻՆ ԿԻՑ ԳՅՈՒՏԱՐԱՐԱԿԱՆ ԿԱԶՄԲՅՈՒՐՈՅԻ ԶԵԿՈՒՅՄԱՆ ԱՌԹԻՎ)

Գյուտարարների Համահայաստանյան առաջին համագումարը, լսելով ՀԱՄԽ-ին կից գյուտարարական կազմբյուրոյի զեկուցումը բանվորական գյուտարարության ներկա դրության և նրա հեռանկարների մասին, արձանագրում է, որ վերջին շրջանում (1931 թ. փետրվար ամսից սկսած), շնորհիվ ՀԱՄԽ-ի կողմից ձեռք առնված միջոցների, գյուտարարության աշխատանքներում որոշ բեկում է առաջացել, մի շարք ձեռնարկություններում կազմակերպվել են գյուտարարական բջիջներ, խոշոր ձեռնարկություններում ստեղծվել են գյուտարարական բյուրոներ, հաշվի յեն առնված գյուտարարները և նրանց գյուտերի ու առաջարկների կատարման չափը, անցյալի համեմատությամբ կանոնավորվել է գյուտերի ու առաջարկների քննությունը, նրանց տնտեսական եֆեկտի հաշվառումը և գյուտարարների պարգևատրությունը և այլն:

Այս դրական նվաճումների կողքին համագումարն արձանագրում է մի շարք բացեր և թերություններ, վորոնք ընդհանուր առմամբ հանգում են հետևյալին.

1. Գյուտերի ու կատարելագործումների առաջարկները ժամանակին քննության առնելու, հաստատելու և ընթացք տալու աշխատանքները դեռևս չափազանց անմխիթարական դրության մեջ են գտնվում: Սակավ չեն դեպքեր, յերբ ձեռնարկություններին կից ՃՏՍ-ների և մանավանդ գյուտարարական բյուրոնե-



րի դանդաղաշարժության, բյուրոկրատական, անգամ ապորտունիստական վերաբերմունքի շնորհիվ այդպիսի արժեքավոր առաջարկները վոչ միայն ամիսներով, այլև ամբողջ տարիներով մնում են առանց քննության և մատնվում կատարյալ անուշադրության:

2. Պատենտ ստացած գյուտերի ու կատարելագործումների պատրաստման պատվերները նույնպես անուշադրության են մատնվում և տարիներով մնում են Յերևանի Մեխանիկական գործարանում («Ծիրվարդ» գործվածքային մեքենայի պատվերը, տպարանի բանվոր Դանուշյանի մամուլ հավաքող մեքենան և այլն): Անգամ ՀԱՄԽ-ի նախագահության հատուկ դիմումը՝ ուղղված Մեխգործարանի բանվորության՝ հարկ յեղած բեկումը չառաջացրեց:

3. Տեղերում արտադրական խորհրդակցությունները համարյա ամենևին չեն զբաղվել գյուտարարական աշխատանքները ծավալելու և ղեկավարելու ուղղությամբ: Այդ գործում միանգամայն անբավարար է յեղել ղեկավարությունը տեղական պրոֆկազմակերպությունների կողմից:

4. Տնտեսական մարմինները և առանձին տնտեսավարները, չնայած վերադաս մարմինների հատուկ վորոշումներին ու հրահանգներին, դեռևս իրենց աշխատանքները չեն դասավորել գյուտարարությանը զարկ տալու, նրան գործնականորեն օժանդակելու և այն ըստ ամենայնի ծավալելու ուղղությամբ:

5. Պարգևատրման և գյուտարարության օժանդակման ֆոնդերի օգտագործումը դեռևս վերջնականապես չի կանոնավորված: Այդ ֆոնդերը յերբեմն ծախսվում են այլ նպատակների, իսկ յերբեմն էլ բոլո-

րովին չեն օգտագործվում, և այդ այն ժամանակ, երբ տվյալ միավորների գյուտարարները նյութական օժանդակության սուր կարիքի պայմանների մեջ են գտնվում: Սակավ չեն դեպքեր, երբ այս կամ այն գյուտն ու առաջարկը պարգևատրելիս ելնում են ոչ թե տվյալ գյուտի տնտեսական կամ հասարակական էֆեկտից, այլ սեփական քմահաճույքից, առիթ տալով արդարացի դժգոհությունների:

6. Գյուտարարությանն օժանդակող ընկերության բջիջները դեռևս ոչ ամեն տեղ են կազմակերպված, որտեղ էլ որ կան՝ թույլ են աշխատում, չեն կարողանում ընդգրկել տվյալ արտադրության ռացիոնալացման վերաբերող հարցերի շրջանակը, լայն պրոպագանդա մղել գյուտարարության զարգացման ու ծավալման ուղղությամբ, հասարակական կարծիք ստեղծել այդ խնդիրների շուրջը, բանվորական ամուր հսկողություն սահմանել և այլն, որպիսին հետևանք է տեղական և վերադաս պրոֆկազմակերպությունների սիստեմատիկ ղեկավարության բացակայության:

Ելնելով այս ամենից, գյուտարարների Համահայաստանյան անդրանիկ համագումարը առաջարկում է՝

1. Հիմք ունենալով կուսակցական և պրոֆմիութենական վերադաս մարմինների դիրեկտիվները, անհապաղ ձեռնարկել գյուտարարական բջիջների կազմակերպման բոլոր այն ձեռնարկություններում, որտեղ դեռևս չկան այդպիսիք, միաժամանակ համապատասխան միջոցների դիմելով ամրացնելու արդեն կազմակերպված ու գործող բջիջների աշխատանքները:

2. Հարց հարուցել ՀԱՄԽ-ի նախագահության առաջ հատուկ միջոցառումներով ուժեղացնելու միու-



թյունների՝ կենտվարչությունների, ինչպես նաև տեղական միջմիութենական և միութենական կազմակերպությունների և արտխորհրդակցությունների ամենօրյա սիստեմատիկ ղեկավարությունը գյուտարարական աշխատանքների նկատմամբ:

3. Գյուտարարության բջիջների միջոցով քննության առնել գյուտերի, կատարելագործումների և ռացիոնալիստական առաջարկների քննությունն ու կիրառումը արգելակող հանգամանքները և միջոցներ ձեռք առնել հասարակական ներգործության կարգով վերացնելու խոչընդոտները:

4. Գյուտարարական բջիջների միջոցով քննության առնել տվյալ ձեռնարկության ռացիոնալացման պլանները և բջիջի աշխատանքները հարմարեցնել այդ պլանների կատարման ամեն կերպ աջակցություն ցույց տալու խնդրին, ռացիոնալիզատորական ձեռնարկումների ժամանակին ու արագ կենսագործման խնդրում հասարակական լայն վերահսկողություն սահմանելով:

5. Գյուտարարական բջիջները ամեն միջոցի պետք է ձեռնարկեն էքսպորտային սարքավորումներն ու հումքը տեղականներով փոխարինելու, ինչպես նաև արդֆինպլանների քանակական ու մանավանդ որակական ցուցանիշների կատարմանն ամեն կերպ օժանդակելու ուղղությամբ:

6. Գյուտարարական բջիջների նկատմամբ ապահովել նախաձեռնողի դերը սոցմրցման ու հարվածայնության և աշխատանքի սոցիալիստական այլ ձևերի զարգացման գործում:

7. Կազմակերպել և ուժեղացնել փորձի փոխանա-

կությունը առանձին բջիջների միջև, մասսայականացնել արժեքավոր գյուտերն ու առաջարկները և նրանց տնտեսական ու հասարակական էֆեկտը:

8. Հարց հարուցել ՀԱՄԽ-ի նախագահության առաջ հանձնարարելու ԾՏՄԲ-ին, վորպեսզի վերջինս միջոցներ ձեռք առնի ԾՏԱ-ներին և առանձին ԾՏ աշխատավորներին ավելի մեծ չափով մասնակից դարձնելու գյուտարարության ոժանդակման աշխատանքներին, կազմակերպելով կոնսուլտացիոն բյուրոներ, հատուկ դասախոսություններ ու զրույցներ, աջակցելով գյուտարարական բջիջների աշխատանքների կազմակերպմանն ու ծավալմանը:

9. Նկատի ունենալով «Տիրապետենք տեխնիկային» Ստալինյան լոզունգի կենսագործման հրատապ նշանակությունը, բոլոր միջոցները ձեռք առնել, վորպեսզի վոչ մի գյուտարար դուրս չմնա տեխնիքական ուսուցման խմբակներից:

10. ԺՏԳԽ-ի գծով գոյություն ունեցող կենտրոնական և տեղական գյուտարարական բյուրոների լիկվիդացիան համարելով վերադաս մարմինների դիրեկտիվները ամբողջապես սխալ հասկանալու և այն խեղաթյուրելու հետեվանք, հարց հարուցել վոչ միայն վերականգնելու այդ բյուրոները, այլ և ծավալելու նրանց ցանցը բոլոր կարեվոր ձեռնարկություններում և ամեն կերպ ուժեղացնելու նրանց աշխատանքները, սահմանելով սիստեմատիկ ղեկավարություն և ուժեղ վերահսկողություն, վերջ տալով այն խայտառակ բյուրոկրատական վերաբերմունքին, վորպիսին յեղել է մինչև այժմ գյուտերի քննության ու իրացման ասպարեզում:

11– Հանձնարարել ընկերության նոր ընտրվելիք



խորհրդին ՀԱՄԽ-ի նախագահության հետ միասին հարց հարուցել համապատասխան մարմինների առաջ Յերեվանում կազմակերպելու եքսպերիմենտալ արհեստանոց:

12. Նկատի ունենալով ընդհանրապես տեխնիկայի և մասնավորապես գյուտարարության հարցերին վերաբերյալ հայերեն գրականության բացակայությունը և այդ հարցերի թույլ լուսաբանումը մեր պարբերական մամուլում, հարց հարուցել ՀԱՄԽ-ի նախագահության առաջ վճռական միջոցառումներով ապահովելու համապատասխան մասսայական գրականության հրատարակությունը, ինչպես նաև մոտիկ ապագայում հրատարակել մասսայական տեխնիկական մի ժուռնալ, նրանում ապահովելով գյուտարարական բաժին:

13. Գյուտարարների տեխնիքական գրագիտության մակարդակը բարձրացնելու նկատառումով նպատակահարմար համարել Յերեվանում և Լենինականում կազմակերպել հատուկ տեխնիքական կուրսեր գյուտարարների համար:

14. Միջոցներ ձեռք առնել լավագույն բանվոր գյուտարարներին քաղաքականապես պատրաստելու և նրանց կուսակցության շարքերը ներգրավելու համար:

15. Միջոցներ ձեռք առնել մինիմումի հասցնել գյուտարարների հասարակական բեռնավորումը, ապահովելով մաքսիմում ազատ ժամանակ ստեղծագործական աշխատանքի համար:

16. Խոշոր ձեռնարկություններին և ակումբներին կից կազմակերպել գյուտարարական անկյուններ:

17. Կազմակերպել ձեռնարկությունների և տնտեսական մարմինների սոցիալիստական պատվերի ստա-

ջարդման գործը, նպատակ ունենալով վոչ միայն տվյալ արտադրական ճյուղի «նեղ տեղերի» լիկվիդացիան, այլ և գյուտարարների ստեղծագործական աշխատանքի ազատագրումը տարերայնությունից ու պատահականությունից և նրա հնարավորության սահմաններում մաքսիմալ պլանավորումն ու ռիտմիկացիան։

18. Նկատի ունենալով գյուտարարական գործի և նրա կազմակերպման հիմնական սկզբունքների թույլ մասսայականացումը, ամենակարճ ժամանակամիջոցում պրոֆկազմակերպությունների միջոցով լայն մասսայականացնել կուսակցության, խորհրդային իշխանության և վերադաս պրոֆմարմինների դիրեկտիվները, վորոշումները և կանոնադրությունները գյուտարարության մասին։

Гос. Публ. Библиотека ССРА им. А. Мясникяна



# ՑԱՆԿ

եջ

1. ԽՍՀՄ Կենտգործկոմի և Ժողկոմխորհի վորոշումը գյուտարարության և տեխնիքական կատարելագործումների վերաբերյալ կանոնադրությունը կիրառելու մասին . . . . . . . . 3
2. Կանոնադրություն գյուտերի և տեխնիքական կատարելագործումների մասին . . . . . 91
3. Վորոշում № 189, Աշխատանքի և Պաշտպանության Խորհրդի . . . . . . . . . . . . 51
4. Վորոշում № 257, ԽՍՀՄ Ժողկոմխորհի . . . 54
5. Գյուտարարության աշխատանքների դրության մասին (ՀԿ (բ) ԿԿ-ի վորոշումը) . . . . . 55
6. Կանոնադրություն գյուտարարների համամիութենական ընկերության . . . . . . . . 64
7. Ժամանակավոր կանոնադրություն, ձեռնարկությունների գյուտարարական ընկ. բջիջների աշխատանքի և կազմակերպման կարգը . . . 76
8. Գյուտարարների համահայաստանյան առաջին համագումարի 1931 թ. մայիսի 16-ի բանաձևը . 8

<< Ազգային գրադարան >>

NL0261749

322

ԳԻՆԸ 25 ԿՈՊ. (3 մ.)

МАССОВОЕ ИЗОБРЕТАТЕЛЬСТВО

Госиздат ССР Армении
Эривань—1931